Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3000

264
S-36

1891

2010

2001

264
Տ-36

# ՏԵՏՐԱԿ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

## ՍՐԲՈՅ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ

ՏՊԵԱԼ ԸՍՏ ՎԱՂԵՄԻ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏԱՄԱՆՑ
ՆԱԽԱԳԱՀ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

2012

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1891

24

Մի՛ մեզ, Տէր, մի՛ մեզ. այլ անուան քում տո՛ւր զփառս,
վասն ողորմութեան եւ ճշմարտութեան քո։

Սաղմ. ՃԺԳ. 9։

52976-ար

38693-67



Ճըշմարտապէս՝ խաչելու թեւովք,
Անպարտականդ՝ մեզ ողորմեա՛.
Մածմամբ մարմնոյդ՝ 'ի փայտ խաչին,
Սուրբ բեւեռօքն՝ 'ի մեզ գըթա՛։

# ԿԱՆՈՆ

## ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ

ՇԱԲԱԹ յութերորդ ժամու 'ի սուրբ Յակոբ հարկանի կոչնակ. Սրբազան Պատրիարքն, կամ Եպիսկոպոս ոմն Թափօրապետ՝ գնայ 'ի սուրբ Յարութիւն ամենայն միաբանութեամբ։ Աւագ Լուսարարն՝ յետոյս դրան սրբոյ Յարութեան, տայ Թափօրապետին շուրջառ, խաչ և գաւազան։ Կարգէ և երկու քշանցաբարձ յաջմէ և յահեկէ։

Նախասարկաւագն ասէ 'ի ձայն.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ կեցո՛
և ողորմեա՛։

Թափօրապետն Տեառնագրեալ ասէ,

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

և արկանէ խունկ 'ի բուրվառն։

Ժամասացն՝ Ըստ դասին երգէ քաղցրաձայն.

Հրաշափառ Աստուած և միշտ բա″. և այլն։

Սարկաւագունք զոյգ բուրվառաւ խնկարկեալ Թափօրապետին՝
մերձենան 'ի սուրբ Պատանատեղն։

Թափօրապետն տայ զգաւազանն Աւագ Լուսարարին, և առնու զբուրվառն 'ի Նախասարկաւագէն, խնկարկէ Պատանատեղւոյն, Թափօրական խաչին և Աւետարանաց ըստ սովորութեան, ապա սրբոյ Գողգոթային, և շուրջ զտեղեաւն՝ Եպիսկոպոսաց և Վարդապետաց, որք զկնի գնան՝ և ժո-

զոլորտոյ եւ կրկին սուրբ Պատանատեղւոյն. յետոյ տայ զբուրվառն 'ի Նախասարկաւագն, և ինքն 'ի վերայ սրբութեան գործին 'ի ծունկս անկեալ՝ համբուրէ զսուրբ Պատանատեղն Քրիստոսի, և ելեալ առնու զգաւազանն, և գնան Թափօրականքն դասադաս 'ի սուրբ Գերեզման՝ զոյգ զոյգ,

Ասելով Շարական ։

Դջ. Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող. որ յառաջ գիտութեամբ ըզփրկութիւն հայաստանեայց ըսկըզբնաւորեալ, 'ի պարթեւական մեղապարտ ազգէն Լուսաւորիչ մեզ շնորհեցեր. վասն որոյ բարեխօսութեամբ սորա Փրկեա կեցո ըզմեզ այժմ եւ 'ի քո յահաւոր գալըստեանն ։

Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբ Գրիգոր զանտանելի ըզչարչարանս 'ի յանձն էառ, եւ երիւք հընգօք ամօք 'ի մէջ Թունաւորացըն բնակէր անդընդային տանջանօքն 'ի վիրապին. վասն որոյ ։

Հրաշագործ քո բանիւդ եւ մեծ ողորմութեամբ, ելեալ բըժշկէր ըզհարուածեալսն 'ի դիւաբախս սաստիցն. երկրպագուս առնելով զամենեսեան սուրբ Երրորդութեանդ. վասն որոյ ։



Ի հասանել Թափօրապետին 'ի մէջ սեանց՝

Ասէ Շարական ։

Ակ. Առաքեցար 'ի Հօրէ Բանդ Աստուած 'ի փրկութիւն ազգի մարդկան. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած ։

Ի գերեզման իջեր Թագաւոր անմահ եւ 'ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք ըզ ։

Ի յերրորդ աւուր յարեար աստուածապէս եւ 'ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո Տէր. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած ։

Յարուցեալ Տէրն 'ի գերեզմանէն մտածինն որպէս փայլակն, եւ լոյս փառաց ծագեաց յաշխարհս, եւ երկինք եւ երկիրըս ցընծային ։

Մեծ է յարութիւն աստուածորդւոյն. քանզի դրունք երկնից բացեալ եղեն եւ հոտ անոյշ բուրեաց յաշխարհս, եւ լցոյց զարարածս ամենայն ։

Զօրք երկնից իջեալ էին եւ բանակեալ շուրջ ըզգերեզմանաւն, եւ հոգեղէն բարբառով երգէին. Տէր օրհնեալ է քո յարութիւնդ ։

Սքանչելի հրեշտակըն Տեառն ցընծութեամբ իջեալ ՚ի գերեզմանըն հարկանէր փող յարութեանըն Տեառն։

Ի հարկանել փողոյն պահապանքըն զարհուրեցան եւ եղեն ՚ի յահէն որպէս մեռեալ։

Զայն եղեւ ՚ի հրեշտակէն բարբառ եղեւ ուրախութեան Տէր Յարեաւ. փառք Յարութեանըն Տեառն։

Դրունքըն փակելովք երեւեալ Յիսուս աշակերտացն եւ ասէր. խաղաղութիւն ընդ ձեզ։

---

Իբրեւ ժամանեն ՚ի դուռն Գերեզմանին Քրիստոսի, Թափօրականքն պար առեալ շար ՚ի շար՝ Աւետարանաբարձքն առաջի սուրբ Դրան դասակարգ՝ յաջմէ և յահեկէ, Թափօրական խաչն առաջի դրան Յունաց եկեղեցւոյն։ Սարկաւագունք մտեալ խնկարկեն նախ զսուրբ Գերեզմանն, ապա ելեալ խաչանիշ խնկարկեն զՎէմն Հրեշտակին եւ ելանեն արտաքս. յետ այնորիկ Թափօրապետն մտեալ խնկարկէ, և տայ զբուրվառն յԱւագ-Թարգմանն և ելեալ նստի յաթոռն, որ զնի արտաքին դրան եդեալ. ամենայն Թափօրականք մտանեն խոնարհեալ Թափօրապետին, համբուրեն զսուրբ Գերեզմանն՝ և ելանեն խոնարհելով Թափօրապետին։ Ապա, ելանէ արտաքս Թափօրապետն եւ շուրջ զԳերեզմանաւ գնան ելանել ՚ի սուրբ Վերնատուն. Ասելով Շարական՝ և հարկանի զոյգ կոչնակն մեր։



Բաբունորէն բացատրեցուք զծածկեալ խորհուրդըն ծանիցուք. զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց տեսանելի, ՚ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեան սուրբ ճառագայթ. Եկայք փրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն։

Մերոյդ սիրով խոնարհեցար ՚ի փրկութիւն մեր մարմնացար. նովին մարմնովըն խաչեցար, ՚ի գերեզման մահու եդար. այսօր Յարեար աստուածաբար ՚ի հրեշտակաց քարոզեցար. Եկայք փր։

Երեւեցար խընկաբերիցն յողջոյն կենացն ուրախալից. եւ ՚ի լերինըն Գալիլեայ Առաքելոց մետասանից. արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրըն վերջին. Եկայք փր։

Սիովնի որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ. գայ պըսակէ ըզքեզ փառօք, եւ ընդ առաջ պըճնեալ զարդուք. երգեա երգ նոր յարուցելոյն նընջեցելոց կենաց պըտղոյն։

Թափօրապետն Իբրեւ հասանէ 'ի գլուխ սանդխոց Վերնատան. Երգէն Շարական ։

Գ Ձ. Ո՛ւրախ լեր սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պճնակեաց ընդ քեզ խաչիւն իւրով. եւ զարդարեաց զամուրս քո՝ սքանչելի փառօքն իւրովք։

Խնդա յոյժ դուստր Սիովնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո նորոգմամբ, եւ Թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակել 'ի քեզ։

Ընդ դասս երկնաւոր զօրացն մեր առեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառաբանութիւնս. ուրախ լեր հարսն անարատ անքննին քո խորհրդով։

Փառք Հօր և". Այժմ և միշտ և".

Աղբերացուսցես 'ի մեզ զշնորհս քո զողորմութեան. Տէր Աստուած խոստովանեսցուք հաւատով սուրբ զԵրրորդութիւնդ, զՀայր եւ զՈրդի և ըզՍուրբ զՀոգիդ յաւիտեանս ամէն։

Եւ յորժամ հասանեն յԱտեան ։
Ասաց Լուսարարն կամ Ժամօրհնողն ասէ, Ալէլուիա ալէ".
Թափօրապետն. Ուրախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս, և այլն.



Սարկաւագն. Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր. զի".
Թափօրապետն. Ի մէջ տաճարիս և առաջի աստուածընկալ".
Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր. զի սո".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս".

Ժամակարգութիւն ըստ պատշաճի աւուր պաշտի անդ։

---

Իսկ յիններորդ ժամու գիշերի հարկանի կոչնակ 'ի սուրբ Յակոբ. դարձեալ գնան 'ի սուրբ Յարութիւն. 'ի Վերնատան պաշտի գիշերային ժամերգութիւն։ Ճաշուն՝ առաջի դրան սուրբ Գերեզմանին ասի, 'ի սենեակ Տեսչին զգեստաւորի Ժամարարն. Խորհուրդ խորին անհաս ան". 'ի հասանել Ժամարարին 'ի մէջ սենանց, ասի Շարական. Հրաշափառ Աստուած և մեր Բարեխնամող որ". Լուացումն եւ Ընտրեալն՝ առաջի դրան Գերեզմանին. Սպասն՝ 'ի վերայ Հրեշտակի Վիմին դնի։ Յորժամ ընթեռնուն զՃաշու գիրքն, ելանէ Ժամարարն և նստի յաթոռն, որ առաջի դրան սուրբ Գերեզմանին դնի։ Այսպէս՝ և 'ի ժամ Վերաբերման ելեալ նստի. յաւարտ Պատարագին, ասելով Շարական. Ո՛ր զշնո՛րհս աստուածային ա՛ռ 'ի վերուստ իջեալ յերկնից՝ պարգեւեցեր Հիւսիսայն". բերեն զԺամարարն 'ի սենեակ Տեսչին ։

Սարկաւագն. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սո".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց".

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն.
Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո"։
Օրհնեա՛լք եղերուք 'ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթա՛յք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանս. ամէն ։

Եւ դառնան 'ի սուրբ Յակոբ ։



# ԿԱՆՈՆ

## ԳԻՒՏ ԽԱՉԻ

ՇԱԲԱԹ յութերորդ ժամու, 'ի սուրբ Յակոբ հարկանի կոչնակ. Սրբազան Պատրիարք, կամ Եպիսկոպոս ոմն Թափօրաւ գնայ 'ի սուրբ Յարութիւն ամենայն միաբանութեամբ և կատարեն զհանդէս Հրաշափառի: Զկարգն Տե՛ս 'ի Կանոն Վարագայ Խաչին, այսու տարբերութեամբ եւ եթ՝ զի յետ ելանելոյ Թափօրաւորին 'ի սուրբ Գերեզմանէ, զկողմամբ սուրբ Պարտիզէն գնան 'ի սուրբ Լուսաւորիչ. Ասելով Շարական.

Սիովն որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեցաւ մահու իշխանութեամբ. գայ պսակէ ըզքեզ փառօք, եւ ընդ առաջ պընձնեալ զարդուք. երգեա երգ նոր յարուցելոյն նընջեցելոց կենացն պըտղոյն:

Երեւեցար խընկաբերիցն յողջոյն կենացն ուրախալից. եւ 'ի լերինն Գալիլեայ Առաքելոց մետասանից. արժանացո զմեզ

ընդ նոսին զքեզ տեսանել յօրն վերջին. եկայք փրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն։

---

Թափօրապետն Իբրեւ հասանէ և իջանէ 'ի սուրբ Լուսաւորիչ.

Երգեն Շարական։

Գ Ձ. Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով. և այլն. Տե՛ս յէջ 10։

Իբրեւ հասանեն յԱտեան.

Աւագ Լուսարարն կամ Ժամ օրհնողն ասէ, Ալէլուիա ալէ".

Թափօրապետն. Ուրախ եղէ ես՝ ոք ասէին ցիս, և այլն.

Սարկաւագն. Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր. զի".

Թափօրապետն. Ի մէջ տաճարիս և առաջի աստուածընկալ".

Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր. զի ստ".

Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս".

Ժամակարգութիւն ըստ պատշաճի աւուր պաշտի անդ։

---

Ցիններորդ կամ յութերորդ գիշերային ժամու՝ հարկանի կոչնակ 'ի սուրբ Ցակոբ, գնան ամենայն միաբանք և տերունական ուխտաւորք 'ի սուրբ Ցարութիւն։ Գիշերային ժամերգութիւն 'ի սուրբ Լուսաւորիչ եկեղեցին պաշտի ըստ սովորութեան։ Ի սկսանել Հարցին՝ Աւագ-Լուսարարն բացեալ գլխով բառնայ յԱւագ-Սեղանէ զկենսատու խաչն, զոյգ մոմակալաւ և զոյգ բուրվառաւ տանի հանգուցանէ



'ի Խաչգիւտն։ Ցորժամ երգեն, զՈ-ով Բո-րեըլոն. Սարկաւագունք զոյգ բուրվառաւ խնկարկեն երիցս սուրբ Խորանին և իջանեն 'ի Գիւտ խաչ, խնկարկեն անդ՝ եւ դառնան գան յԱտեան, և կրկնեն՝ ըստ կրկնութեան Ո-ով Բո-րեըլոյն։ Յետ որոյ նովին հանդիսիւ Աւագ-Լուսարարն բարձեալ բերէ զսուրբ Խաչն և դնէ 'ի Սեղան Լուսաւորչի, ուր եւ մատչի Հանդիսաւոր Պատարագն։ Վերաբերումն իջանէ 'ի Գիւտ խաչն հանդիսիւ. դնէ զսկիհն անդ. և խնկարկեալ առեալ բերէ։ Զկնի Առաքելոյն զգեստաւորի Թափօրապետն։ Աւագ-Լուսարարն տանի զկենսատու խաչն դնէ 'ի Խաչգիւտն՝ լուցեալ կրկին աշտանակօք յաջմէ և յահեկէ։ Ցաւարտ սուրբ Պատարագին,

Նախասարկաւագն Ասէ 'ի ձայն. Եւ եւս խաղաղութեան զՏէր".

Թափօրապետն Արկանէ խունկ և ասէ.

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Ժամասացն Ըստ ձայնին երգէ բարձրաձայն՝ Շարական։

Բ Ձ. Այսօր նշան սուրբ խաչին 'ի յերկրի երեւեալ. օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան։

Այսօր ընդդէմ թշնամւոյն զէն անպարտելի ցուցաւ մեզ. օրհնե։

Ա Ձ. Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս գանձ անճառ զօրութեան 'ի յերկրի երեւեալ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։

Զոր Հրէիցն ծածկեալ զանթաքչելին ընդ-

զանձըն, փափագմամբ Թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ. Եկայք ժողո։

Սա է զէն յաղթութեան հաւատացելոց. ախոյեան և կնիք յաղթող ընդդէմ Թըշ-նամւոյն. Եկայք ժողո։

Իջանեն 'ի Գիւտ խաչ. Աւետն Սաղմոս յայնժ–. Ալէլուիա ալէ". Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախու".

Սարկաւագն. Որթի։

Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա".

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։ Ասէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։

Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին ար-ծուիք։

Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից և զօրութիւնք երկնից շարժես-ցին։



Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս. եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. եւ տեսցեն զՈրդի մարդոյ ե-կեալ 'ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Սուրբ խաչիւս".

Թափօրականքն. Կեցո Տէր։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո".

Թափօրապետն. Պահպանիչ և լոյս հաւատացելոց Քրիստոս".

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".

Թափօրապետն. Տեառնագրեալ արկանէ խունկ եւ առնու զբուրվառն եւ խնկարկէ սուրբ խաչին, եւ համբուրեալ բառնայ անտի. և Թափօրականքն երգեն, Նշանաւ ամենայաղթ. կամ Այսօր երեւ–։

Գկ. Այսօր երեւեցաւ մեծի ճառագայթի նշանի Տեառն Աստուծոյ մերոյ փայլեալ 'ի նաւակատիսն որ յե-րուսաղէմ. ժողովուրդք բարեբանեսցուք ըզ Քրիստոս տօնեցէք ուրախու-թեամբ։

Քանզի նշանաւ կենսատու սուրբ խաչին արեգակնակերպ փայլմամբն Թափանցին լուսով 'ի յարեւելից յայտնեալ. ժողո։

Ի յերկնից ցոլացեալ ահեղ և նո



38693-67
ՀՍՍՀ ... Гос. библиотека ZUUՈ-Арм ССР им. А. Мясникяна

րանքանչ հրաշիւք ցուցաւ առ սուրբ Գողգոթայ, Նշանըն տէրունական. ժողո։

Ակ. Նշանաւ ամենայաղթ Խաչիւդ քո Քրիստոս պահպանեա զմեզ մարդասէր յա-ներեւոյթ թշնամւոյն. զի դու միայն ես թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան։ Որ ՚ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկս քո. եւ հեղեր զարիւնդ ՚ի փըր-կութիւն տիեզերաց. զի դու։

Ի միւսանգամ քո գալըստեանն յերեւիլ սուրբ Նշանիս, արժանի արա ըզծառայս քո վերըստին նորոգման. զի դու։

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն բոցանիշ փայլմամբն իւրով. խորտակեաց ըզթըշնա-մին, եւ ելոյծ ըզդատակնիք անուանեալ Փայտըն կենաց ՚ի փըրկութիւն տիեզերաց։ Վերացեալ ցընծան երկինք, և երկիրս ուրախանայ ընդ յայտնիլ սրբոյ Խաչին սե-ռակնաձեւ քառաթեւին, որ զաշխարհըս լուսաւորեաց արեգականակերպ ճառագայ-թիւք։



Ցընծացաւ Երուսաղէմ բերկրեցան հա-ւատացեալք, նորահրաշ զարդարեցան, քանզի տեսին զյաղթող Նշանն. արարածք ամենայն ՚ի լուսոյն պայծառացան։

Եւ եղանեն ամպհովանեաւ ընդ ճանապարհ սուրբ Պար-տիզին շար ՚ի շար՝ եւ շրջին զկենսատու Գերեզմանաւն, երկիցս. յերրորդին, Թափօրական սուրբ Խաչն եւ Աւագ Խաչվառն որ զկնի Թափօրապետին՝ յանդիման սուրբ դրան Գերեզմանին Քրիստոսի, այս է առաջի դրան Յունաց եկե-ղեցւոյն կանգնին, Աւետարանաբարձ Վարդապետք կամ Քահանայք՝ առաջի դրան Աստուածընկալ Գերեզմանին շարադաս, և Թափօրականքն՝ պարաւեալ՝ յաջմէ և յահեկէ։ Սարկաւագունք մեծալ խնկարկեն ՚ի սուրբ Գերեզման։ Թափօրապետն մեծալ դնէ զսուրբ Խաչն ՚ի վերայ Վիմի Հրեշտակին՝ խնկարկէ ՚ի սուրբ Գերեզման։

Սարկաւագն. Որթի։

Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուաւ.

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մարկոսի։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։

Ասէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս և ոչ Որ-դի, բայց Հայր միայն։

Զգո՛յշ լերուք, հսկեցէք և կացէք յաղօ-
թըս. զի ո՛չ գիտէք երբ ժամանակն իցէ։
Որպէս այր մի գնացեալ 'ի տարաշխարհ՝
թողուցու զտուն իւր, և տացէ ծառայից
իւրոց իշխանութիւն, և իւրաքանչիւր ըղ-
գործս իւր, և դռնապանին պատուէր տայ-
ցէ՝ զի արթուն լինիցի։
Արդ՝ արթո՛ւն կացէք, զի ո՛չ գիտէք երբ
տէր տանն գայցէ, յերեկորեայ, եթէ 'ի մէջ
գիշերի, եթէ 'ի հաւախօսի, եթէ ընդ
առաւօտս. գուցէ եկեալ յանկարծակի՝
գտանիցէ զձեզ 'ի քուն։
Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝
արթո՛ւն կացէք։

---

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւ".
Արկանէ խունկ, և առնու 'ի ձեռն զսուրբ Խաչն, և դար-
ձեալ շուրջ զԳերեզմանաւ երթան 'ի սուրբ Պատանատեղն.
Աւելորդ Շարական.

ԲՁ. Պա՛րգեւատո՛ւն ամենեցո՛ւն այսօ՛ր
խնդրի՛ պարգեւս 'ի Պիղատոսէ. եւ ո՛ր-
կողն ըզլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ
'ի Յովսեփա՛յ։



Կե՛նդանատո՛ւն ամենեցո՛ւն այսօ՛ր դընի՛
'ի Նոր Գերեզմանի. Եւ գա՛նձն անմահու-
թեան կընքի մատանեաւ քահանայից։
Ա՛րարածո՛ց փրկութիւն Քրիստո՛ս այսօ՛ր
եղաւ 'ի նորափո՛ր վիմի. զո՛ր օրհնեն զօ՛րք
երկնից երգո՛վ պահպանի 'ի զինուորացն։

Սարկաւագն. Որթի։
Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա".

Սուրբ Աւետարանն Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Վասն Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ
որ յԱրեմաթեայ էր, աշակերտ Յիսուսի 'ի
ծածուկ՝ վասն ահին Հրէից, զի բարձցէ
զմարմին Յիսուսի. և հրամայեաց Պիղատոս.
եկն և եբարձ զնա։
Եկն եւ Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ
Յիսուս 'ի գիշերի զառաջինն, և եբեր զմու-
ռըս խառն ընդ հալուէս՝ իբրեւ լտերս
հարիւր։
Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կը-

տաւօք և խնկօք համդերձ, որպէս օրէն էր Հրէից պատել։

Եւ էր 'ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ, եւ 'ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք երբէք էր եդեալ։

Անդ՝ վասն ուրբաթուն Հրէից, զի մօտ էր գերեզմանն, եդին զՅիսուս։

Թափօրապետն. Հոգւոյն հանգուցելոց Քրիստոս աստուած"։
Սարկաւագն. Եւ եւս խաղաղու"։ Վասն հանգուցեալ հոգ"։
Աւետարան ընթերցողն. Քրիստոս Որդի Աստուծոյ անմահ"։
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Թափօրապետն. Արկանէ խունկ, և ասէ՝ օրհնութիւն և"։

Եւ գան 'ի դուռն սուրբ Գերեզմանին. Աւետիս Շարական։

Դ.Զ. Ահագին ձայնիւ ըրդ.քո Քրիստոս 'ի վերայ խաչին դողացուցեր զարարածս ամենայն զերկնային եւ զերկրաւոր բնութիւնս։

Ահագին երեւումն հրեշտակին զարհուրեցոյց ըզկանայսն ասելով, զի խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս։

Եւ յահէ զօրութեան աստուածորդւոյն զարհուրեցան կարապետք դժոխոցն ասելով. համբարձէք իշխանք ըզդրունս ձեր 'ի վեր։



Որ 'ի վերդ ես քան ըզմիտս եւ զխորհուրդս, համագոյակցն եղելոցս արարող, 'ի հօրէ առաքեցար վասն մեր եւ մարմնացար 'ի սուրբ 'ի կուսէն։

Անքննին 'ի յէութեան աստուած. տնօրինեցար յարգանդի կուսին, ապրեցուցանել զնախաստեղծն ծննդովն, եւ վերստին նորոգել 'ի փառս։

Ոչ շատացար մարդ եղանիլ աստուած, այլ եւ խաչի համբերեալ ըզթաղումն յանձն առեր զերեքօրեայ, և յարուցեալ նորոգեցեր զաշխարհս։

Թափօրապետն մտեալ դնէ զԽաչն 'ի վերայ Վիմի Հրեշտակին, և նստի յաթոռ։ Սարկաւագունք մտեալ խնկարկեն 'ի Գերեզման ըստ սովորութեան։

Սարկաւագն. Որթի։
Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա"։
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Վասն Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն յԱրիմաթեայ, որում անուն էր

Յովսէփ, որ աշակերտեալ իսկ Յիսուսի։
Սա մատուցեալ առ Պիղատոս խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։
Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւօք. և եդ 'ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց 'ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ և գնաց։
Անդ էր Մարիամ Մագդաղենացի՝ և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։

Թափօրականքն՝ զոյգ զոյգ, ըստ սովորութեան մտեալ համբուրեն զսուրբ Գերեզմանն, և զկենաց փայտն և ելանեն։

Ապա ձայնաւոր Տէր ողորմեա ըստ սովորութեան. Երգ։

Գերեզմանիդ՝ քո համբուրման,
Գողգոթայիդ՝ տեղւոյդ զենման.
Սուրբ տաճարիս՝ երկնանըման,
Արա արժան՝ զամենեսեան։
Միջնորդութեամբ սրբոյ Գերեզմանիդ։
Ընկալ Տէր և ողորմեա։

Սարկաւագն. Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի Տեա".
Թափօրականքն. Կեցո Տէր։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո".
Աւետարան ընթերցողն. Քում ամենազօր և հրաշալի չարչա".
Սարկաւագն. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".
Թափօրականքն. Ի ձայն՝ առեն Շարական, Խաչի քո Քրիստոս".



Թափօրապետն. Ըստ արարողութեան Աւագ ուրբաթու աւուր խնկարկէ 'ի Գերեզման, և թափօրականաց, ըստ կրկնութեան Շարականին։

ԲԿ. Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք. և զթաղումն քո մեծացուցանեմք. Եւ զսուրբ զՅարութիւնդ քո փառաւորեմք. Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն 'ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի։
Սուրբ Աստուած. սուրբ և հզօր. սուրբ և անմահ՝ որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ։

Այսպէս երիցս կրկնելով. և ապա։

ԱԿ. Փառք սուրբ Խաչիդ ալէլուիա. սուրբ Սիօնիդ ալէլուիա. սուրբ Յարութեանդ ալէլուիա։
Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութիւն սրտից մերոց։
Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։
Փառք սուրբ Խաչիդ ալէլուիա. սուրբ Սիօնիդ ալէլուիա. սուրբ Յարութեանդ ալէլուիա։

Փառք եւ երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն. եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Փառք սուրբ Խաչիդ անճառելւոյ. սուրբ Սիոնիդ անճառելւոյ. սուրբ Յարութեանդ անճառելւոյ։

ԲԿ. Խաչն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն. սովաւ ամենեքեան ընդ քեզ բարեբանեմք։

Որ ի հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի, եւ զաւազան զօրութեան հաւատացելոց. սովաւ ամենե։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ։

Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. սովաւ ամենե։

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս։

Աղաղակէր Աստուածային բարբառովն Տէր Յիսուս ի խաչին. եւ ընդդէմ ատեղաց կնքէր հրաշեալ աստուածային սուրբ ձեռօքն. եւ բարկութեամբ զարթուցեալ ի վերայ խաւարասէր իշխանին։



Սարկաւագն. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սա՛.
Թափօրապետն. Առնու զսուրբ Խաչն, տեառնագրէ եւ ասէ.
Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած՛.
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն՛.
Թափօրապետն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգ՛.
Եւ շուրջ զԳերեզմանաւ ընդ սուրբ Պատանատեղն գնան ի սուրբ Լուսաւորիչ. Անեղծ Շարական։

ԲԶ. Ապաւինեցաք ի խաչ քո արարիչ յաւիտենից, որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։

Բարձրեալ թագաւոր որ վասն մեր ելեր ի խաչ, եւ բարձեր սովաւ զյանցանս նախաստեղծին Ադամայ. աղա։

Գլուխ սուրբ հաւատոյ եւ փայտ կենաց մարդկան յայտնեալ, զոր տեսեալ այսոյն պղծոյ կործանեցաւ անկանգնելի. աղա։

Դողացաւ թշնամին ընդ յայտնիլ սրբոյ Խաչին, եւ ի յահէ փառաց նորա կործանեցաւ յանդունդս երկրի. աղա։

Երկինք ցնծային եւ երկիրս ուրախանայր, քանզի փրկիչ ցուցաւ սուրբ Խաչն եւ լուսաւոր տիեզերաց. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։

Անդ 'ի սուրբ Լուսաւորիչ.

Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սա".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց".
Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո".
Օրհնեա՛լք եղերուք 'ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթա՛յք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն։

Եւ դառնան 'ի սուրբ Յակոբ։





Ճըշմարտապէս՝ առեր մար մին,
Աստուած եւ մարդ՝ մի երկոքին.
Ծընար մարմնով՝ ըստ մարդկային,
Որ 'ի Հօրէ՝ նախ անմար մին։



# ԿԱՆՈՆ

## Ի ՏՕՆԻ ՈՒԹՕՐԷԻՑ

### ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԼՓԱՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Գիշերային ժամերգութիւն 'ի սուրբ Ցակոբ պաշտի. զկնի ժամերգութեան հարկանի կոչնակն. Սրբազան Պատրիարքն, կամ Եպիսկոպոս ոմն՝ ժամարար և հանդիսադիր՝ գնայ 'ի սուրբ Ցարութիւն ամենայն միաբանութեամբ, ուր կատարեն զհանդէս Հրաշափառի, որոյ կարգն յար և նման է աւուր Վարագայ Խաչին։

Ի հասանել հանդիսադրին 'ի մէջ սեանց՝
Ասի Շարական.

Գձ. Ուրա՜խ լե՛ր սուրբ Եկե՛ղեցի, քա՛նզի Քրի՛ստոս ա՛րքա՛յն երկնի՛ց ա՛յ. և այլն. Տես յէջ 10։

Առաջի դրան սուրբ Գերեզմանին ։

Աւագ Լուսարարն կամ ժամօրհնողն ասէ, Ալէլուիա ալէ՛.
Հանդիսադիրն. Ուրախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս, և այլն.
Սարկաւագն. Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի՛.
Հանդիսադիրն. Ի մէջ տաճարիս, և առաջի սա-

տուածընկալ սուրբ Գերեզմանիս խոնար-
հեալ երկիւղիւ երկրպագանեմք․ զսուրբ
և զհրաշալի Թլփատութիւնդ օրհնեմք և"։

Սարկաւագն․ Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Հանդիսադիրն․ Խաչակնքեալ ասէ․ Օրհնութիւն եւ փառք
Հօր և Որդւոյ և Հոգ"։ Եւ արկանէ խունկ ։
Եւ շուրջ զԳերեզմանաւ՝ գնան յՈւժաթափման տեղին
սուրբ Աստուածածնի․ Աւելըղ Շարական ։

Դձ․ Լոյս 'ի լուսոյ 'ի հօրէ առաքեցար եւ
մարմնացար 'ի սուրբ կուսէն, զի վերըստին
նորոգեսցես զանպականեալն Ադամ ։
Դու Աստուած 'ի յերկրի երեւեցար եւ
ընդ մարդկան շրջեցար, եւ փրկեցեր ըզ-
տիեզերըս յանիծիցն Ադամայ ։
Քեզ 'ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն․
ասէ դա է իմ որդի․ եւ սուրբ Հոգին ըզ-
քեզ յայտնեաց աղաւնակերպ երեւմամբ ։

Ի սուրբ Ուժաթափման տեղին ։

Սարկաւագն․ Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սա"։
Հանդիսադիրն․ Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս"։
Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիս"։ Հայր մեր որ յեր"։

Ապա 'ի սուրբ Վերնատուն հարկանի զոյգ կոչնակ․ Ճաշուն
ասի առաջի դրան սուրբ Գերեզմանին և սուրբ Պատարագն
մատչի 'ի վերայ Աստուածընկալ Գերեզմանին նովին եղա-
նակաւ, որ յաւուրս Վարագայ Խաչին․ Տես յէջ 11 ։



Զկնի աւարտման Պատարագին, գնան 'ի սենեակ Տեսչին․
Աւելըղ Շարական․

Դձ․ Որ ըզշնորհս աստուածային առ 'ի վե-
րուստ իջեալ յերկնից պարգեւեցեր հրե-
ղինակերպ նմանս 'ի ձեռըն սուրբ Վարդապե-
տին․ աղաչանօք սորա ողորմեա մեզ Աս-
տուած ։
Որ զանմարմին պարունակող բանի զգրա-
ւորական զիմաստ Հոգւոյն շնորհեցեր որդ-
ւոց Թորգոմայ, յայտնեալ տեսլեամբ 'ի
ձեռըն սուրբ Վարդապետին․ աղաչ ։
Որ զգիտութիւն քո զերկնային եւ զհոգե-
ւոր զիմաստութիւն առատապէս ծաւա-
լեցեր յեկեղեցիս Հայաստանեայց 'ի ձե-
ռըն սրբոց Թարգմանչացն․ աղաչ ։

Ի սենեակ Տեսչին ։

Սարկաւագն․ Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սա"։
Հանդիսադիրն․ Պահպանիչ և յոյս հաւատացելոց"։
Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս․ ամէն ։
Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո"։
Օրհնեալք եղերուք 'ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն․ երթայք
խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենե-
սեանդ․ ամէն ։

Եւ դառնան 'ի սուրբ Յակոբ ։



Ի յայս խորհուրդ զերիս միայն,
Արար գիտող այս խորհրդեան․
Ամպ հովանի նոցա լի նէր,
Եւ Հայր յամպոյն աղաղա կէր։

# ԿԱՆՈՆ

## ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹՈՒ

ՇԱԲԱԹ օր յիններորդ ժամու՝ 'ի սուրբ Յակոբ հարկանի կոչնակ․ Սրբազան Պատրիարքն, կամ Եպիսկոպոս ոմն Թափօրաւ ելեալ՝ գնայ 'ի սուրբ Յարութիւն ամենայն միաբանութեամբ։ Եւ նախ կատարեն զհանդէս Հրաշափառի։

---

Ի հասանել Թափօրաւելոյն 'ի մէջ սենից․ Ասի Շարական։

ԱԿ․ Առաքեցար 'ի Հօրէ Բանդ Աստուած 'ի փրկութիւն ազգի մարդ․ Ե. այլն. Տես յէջ 7։

Իբրեւ ելանէ Թափօրաւելոյն 'ի Գերեզմանէն, շուրջ ըզգերեզմանաւ գնան ելանել 'ի սուրբ Վերնատուն․
Ասելով Շարական։

Բաբունօրէն բացատրեսցուք զծածկեալ խորհուրդն ծանիցուք, զի․ Ե. այլն. Տես յէջ 9։

Թափօրաւելոյն մինչ ելանէ 'ի գլուխ սանդխոց Վերնատան․
Երգեն Շարական։

ԳԶ․ Ուրախ լեր սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այ․ Ե. այլն. Տես յէջ 10։

Իբրեւ հասանեն յԱւետեան.

Աւագ Լուսարարն, կամ Ժամօրհնողն ասէ, Ալէլուիա ալէ՛.
Թափօրապետն. Ուրախ եղէ ես՝ որ ասէին ցիս. և այլն:

Սարկաւագն. Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի՛.
Թափօրապետն. Ի մէջ տաճարիս և առաջի աստուածընկալ՛.
Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սո՛.
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս՛.
Ապա երեկոյեան ժամերգութիւն ըստ պատշաճի աւուր՝ անդ պաշտի: Զկնի դառնան 'ի սուրբ Յակոբ:

---

Յիններրորդ գիշերային ժամու, հարկանի կոչնակ 'ի սուրբ Յակոբ. ամենայն եկեղեցական պաշտօնեայք տէրունական ուխտաւորօք՝ գնան դարձեալ 'ի սուրբ Յարութիւն. 'ի սուրբ վերնատան պաշտեն զգիշերային ժամերգութիւն, և ըզհաշտարար սուրբ Պատարագն: Զկնի Առաքելոցին զգեստաւորի Թափօրապետն՝ հայրապետական զգեստիւ, Վարդապետք և Քահանայք շուրջառաւ. որպէս օրէն է յամենայն աւուրս Թափօրի: Յաւարտ սուրբ Պատարագին.

Նախասարկաւագն Ասէ 'ի ձայն. Եւ եւս խաղաղութեան զՏէր՛.
Թափօրապետն. Խաչակնքեալ ասէ, Օրհնութիւն և փառք՛.

Ժամասացն Ըստ կարգի՝ քաղցրաձայն երգէ Շարական. Որ 'ի լերինն այ՛. Ի խորհուրդ Պայծառակերպութեանն Քրիստոսի: Իջանեն 'ի վայր, և շրջին զԳերեզմանաւն հանդարտաքայլ:

Ա.Զ. Որ 'ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս:



Որ ըղձառագայթ փառաց քոց ցուցեր արեգակնակերպ փայլմամբ զարարածըս լուսաւորեցեր, զքեզ փա:

Որ ահագին տեսլեամբ զարհուրեցուցեր զքո զաշակերտսն, 'ի թըմրութիւն հրաշիցըն 'ի սէր աստուածային փառաց քոց. զքեզ:

Երեւի երբեմն աշակերտացըն հրաշալի տեսլեամբ, պայծառացեալ 'ի Թաբօր լերինն:

Եւ զերրեակ միութեան զանտանելի ըզլոյսն տեսանելով կենդանւոյն մահացան:

Հանդիպեալ նախահարցըն տեսութեամբ հայցէին 'ի Տեառնէ. ասեն բարւոք է մեզ աստ լինել:

Արասցուք երիս տաղաւարըս Տեառն եւ Մովսէսի և Եղիայի. եւ փառաւորեսցուք հանապազ զԵրրեակ միութիւնն:

Թափօրապետն իբրեւ հասանէ 'ի մէջ սեանց.
Ասի Շարական:

Բկ. Ճառագայթ փառաց Հօր որդիդ միածին, որ ըզլոյսդ անվայրափակ մարմնով պա

ըստգրեալ, այսօր 'ի Թաբօր փառօք փայլեցեր։

Որ անտես սրովբէից անհաս 'ի վեր քան ըզքեան, ծառայի կերպիւ պատրածանկեալ ըզլոյս անըստուեր, այսօր 'ի։

Որ հրեղինացն անմերձենալի հուր Աստուածութեանդ, 'ի հողեղէնս խոնարհեալ լոյսդ արփիական, այսօր 'ի։

Որ գերագոյն փառօք պայծառացեալ զադամն առաջին, զոր ճաշակմամբ պտղոյն մերկացեալ ըզփառս անպատումս. այսօր վերըստին փառօք զարդարեցեր։

Որ 'ի նախնում երեւեալ Մովսէսի ամպովքն 'ի Սինա, այսօր լուսաւոր ամպով 'ի Թաբօր յայտնեալ վըկայեաց, Դա է իմ Որդի, դըմա լըւարուք։

Որ 'ի յերկինս վերացուցեր հրեղէն կառօք զԵղիա, այսօր վայրաբերեալ 'ի Թաբօր հանդերձ Մովսէսիւ, խօսէին զելիցն որ յԵրուսաղէմ։

Զկնի երկիցս շրջելոյ՝ շուրջ զԳերեզմանաւ, յերրորդին՝ գնան 'ի սուրբ Պատանատեղին. և մինչ հասանեն Դպիրքն 'ի մէջ սեանցն, որ տանի 'ի Պատանատեղին.

Երգեն Շարական։



Բկ. Օրհնեցէք մանկունք ընդ երկնայնոցն ըզհայրն երկնաւոր. որ մարմնացեալ բանին վկայեաց յերկնից այսօր 'ի Թաբօր լերինն։

Գովեցէք ընդ սերովբէսն զորդին միածին. որ փայլեաց մարմնով զլոյս աստուածութեանն այսօր 'ի։

Բարեբանեցէք ընդ քերովբէսն զհոգին ճշմարիտ. որ լուսափայլ ամպով էակցին հովանացեալ այսօր 'ի։

Ի սուրբ Պատանատեղին դասաւորեալ կարգ 'ի կարգ ընդ միշտ սովորութեան յաջմէ եւ յահեկէ Թափօրապետին 'ի ձայն ասեն. Ալէլուիա ալէլուիա.

Ամպ լուսաւոր հովանի եղեւ նոցա. ձայն եղեւ յամպոյն որ ասէ. Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք։

Սարկաւագն. Որթի։

Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա″.

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակոբոս եւ զՅովհան-

նէս, եւ հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն . եւ յայլակերպս եղեւ առաջի նոցա . և ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս Թափիչք յերկրի ո՛չ կարեն այնպէս սպիտակացուցանել :

Եւ երեւեցաւ նոցա Եղիա Մովսէսիւ հանդերձ, որք խօսէին ընդ Յիսուսի :

Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս . Ռաբբի, բարւոք է մեզ աստ լինել . և արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ, և մի Մովսէսի, և մի Եղիայի :

Քանզի ո՛չ գիտէր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին :

Եւ եղեւ ամպ մի հովանի 'ի վերայ նոցա, ձայն եղեւ յամպոյ անտի եւ ասէ . Դա է Որդի իմ սիրելի, դմա լուարուք :

Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ո՛չ ևս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅիսուս ընդ իւրեանս :

Սարկաւագն . Խնդրեսցուք հաւատով միաբանութե՛ 'ի Տեառ".
Թափօրականքն . Կեցո Տէր : Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո".
Առաջնորդն ընթերցողն . Քում ամենազօր և հրաշալի չարչա".
Սարկաւագն . Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն . Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".
Եւ գնան 'ի դուռն Գերեզմանին . Աւեըղ Շարական :

ԴՋ. Ի՛Թաբօր 'ի լերինն ձեւացուցեր ըզքո



բնութիւնդ անտանելի գոյացութեամբ . ընդ որս եւ մեք ցնծութեամբ երգեմք քեզ, ողորմեա մեզ մարդասէր :

Աշակերտքն հիացեալ բարբառէին ըզխորհուրդս 'ի տագնապի սրտից իւրեանց . ընդ որս :

Սքանչելի մեծ խորհուրդ զերրորդութեանըդ քոց սրբոց առաքելոցըն ծանուցեր բարերար . ընդ որս :

Սոսկալի հիացմամբ զայլակերպութիւն քո Տէր Առաքելոցըն տեսեալ յօրինէին քեզ տաղաւար . ընդ որս :

Հովանացեալ ամպ լուսեղէն եւ ըզհայրականըն լուեալ ըզձայն, եթէ դա է որդի իմ սիրելի . ընդ որս :

Գան 'ի դուռն կենդանատու սուրբ Գերեզմանին պարառեալ շար 'ի շար, Աւետարանաբարձքն առաջի դրան ; Թափօրական խաչն եւ աւագ խաչվառն՝ որ զկնի Թափօրապետին, առաջի դրան Յունաց եկեղեցւոյն : Սարկաւագունք մտեալ խնկարկեն 'ի սուրբ Գերեզման . ապա Թափօրապետն հանէ զԹագն՝ եւ մտանէ խնկարկէ 'ի սուրբ Գերեզման . ապա Սարկաւագունք խնկարկեն խաչանիշ Վիմի Հրեշտակին : Թափօրապետն ելեալ Նստի յաԹոռն՝ որ զկնի արտաքին դրան . ամենայն Թափօրականք մտանեն խոնարհեալ Թափօրապետին, համբուրեն զսուրբ Գերեզմանն, և ելանեն խոնարհելով Թափօրապետին :

Թափօրականք․ Ալէլուիա ալէլուիա․

Լերինք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ՝ և գայ նա 'ի դատել զերկիր ։

Սարկաւագն․ Որթի ։

Աւետարան ընթերցողն․ Խաղաղութիւն ամենեցուն ։

Թափօրականքն․ Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա"․

Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու ։

Թափօրականքն․ Փառք քեզ Տէր Աստուած մեր ։ Պռօսխումէ․ Ասէ Աստուած ։

Վասն Պայծառակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ աւուրք ութ, առեալ զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս՝ ել 'ի լեառն կալ յաղօթս ։

Եւ 'ի կալ նմա յաղօթս՝ եղեւ տեսիլ երեսաց նորա այլակերպ, և փոխեցաւ հանդերձ նորա և եղեւ սպիտակ փայլուն ։

Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա, որք էին Մովսէս եւ Եղիա․ երեւեալ փառօք․ և ասէին զելսն նորա, զոր կատարելոց էր յԵրուսաղէմ։

Իսկ Պետրոս և որք ընդ նմայն էին՝ ծանրացեալք 'ի քնոյ՝ զարթեան, և տեսին զփառսն նորա և զերկուս արսն, որք կային առ նմա ։



Եւ եղեւ 'ի մեկնելն նոցա 'ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս․ վարդապետ, բարւոք է մեզ աստ լինել, եւ արասցուք երիս տաղաւարս, մի քեզ, և մի Մովսէսի, և մի Եղիայի․ և ո՛չ գիտէր զինչ խօսէր ։

Եւ իբրեւ զայս ասաց, եկն ամպ և հովանի եղեւ 'ի վերայ նոցա․ և երկեան 'ի մտանելն նոցա ընդ ամպովն ։

Ձայն եղեւ յամպոյն և ասէ․ դա է Որդի իմ ընտրեալ, դմա լուարուք ։

Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն․ եւ ինքեանք լռեցին, եւ ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչինչ՝ յորոց տեսինն ։

Ապա ձայնաւոր Տէր ողորմեա՛ ըստ սովորութեան․ Երգ ։

Գերեզմանիդ՝ քո համբուրման,
Գողգոթայիդ՝ տեղւոյդ զենման․
Սուրբ Տաճարիս՝ երկնանըդ ման,
Արա՛ արժան՝ զամենեսեան ։
Շնորհիւ սրբոյ Գերեզմանիդ ։
Ընկա՛լ Տէր և ողորմեա՛ ։

Սարկաւագն․ Խնդրեսցուք հաւատով միաբանութբ 'ի Տեա"․

Թափօրականքն․ Կեցո՛ Տէր ։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո"․

Աւետարան ընթերցողն․ Քում՝ ամենազօր և հրաշալի Պայծա"։

Սարկաւագն․ Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"․

Թափօրապետն. Ելեալ գնէ զԹագն: Խաչակնքեալ ասէ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ". Եւ արկանէ խունկ:

Եւ շուրջ զԳերեզմանաւ գնան ելանել 'ի Վերնատուն.

Ասելով Շարական:

Րաբունօրէն բացատրեսցուք զծածկեալ խորհուրդըն ծանիցուք. զի լոյսն անտես իմանալի մաքրուր հոգւոց տե. Նոյն. Տես յէջ 9:

Ի վերնատուն:

Սարկաւագն. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սա".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս".
Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիս". Հայր մեր որ յեր".
Օրհնեալք եղբարք 'ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն:

Եւ դառնան 'ի սուրբ Յակոբ:



# ԿԱՆՈՆ

## ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹՈՒ

ՇԱԲԱԹ յութերորդ ժամու, 'ի սուրբ Յակոբ հարկանի կոչնակ. Սրբազան Պատրիարքն, կամ Եպիսկոպոս ոմն Թափօրապետ՝ գնայ 'ի սուրբ Յարութիւն ամենայն միաբանութեամբ. ուր կատարեն զՀանդէս Հրաշափառին:

Զկարգն տես 'ի կանոն Գիւտ Խաչի:

## ԴԱՏԱՒՈՐԻ ԿԻՒՐԱԿԷՆ

Յիններորդ գիշերային ժամու հարկանի կոչնակ 'ի սուրբ Յակոբ, ամենայն եկեղեցական պաշտօնեայք տէրունական ուխտաւորօք՝ գնան դարձեալ 'ի սուրբ Յարութիւն. 'ի սուրբ Լուսաւորիչ եկեղեցին պաշտեն զգիշերային ժամերգութիւնն: Զկնի գիշերային ժամերգութեան 'ի սուրբ Վերնատան հարկանի զոյգ կոչնակ. Ճաշուն առաջի դրան կենդանատու սուրբ Գերեզմանին Քրիստոսի: Ժամարարն 'ի սենեակ Տեսչին զգեստաւորի և Պատարագն մատչի 'ի վերայ սուրբ Գերեզմանին. Տես յէջ 11:

Յաւարտ Պատարագին, եթէ Թափօրապետն՝ Պատարագամատոյցն լիցէ, զգենու զԹագն և զեմիփորոն, և առնու զԽաչ եւ զգաւազան. եթէ այլ ոք է, 'ի սենեակ Տեսչին զգեստաւորի:

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Արկանէ խունկ և ասէ. Օրհնութիւն և".

Ժամատուն՝ Ըստ դասին երգէ բարձրաձայն։

Բկ. Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո Քրիստոս, անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ աստուած հոգւով եւ մտօք։

Որ ըզգեան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ. հանելով ըզգիշերն ՚ի գլուխ յաղօթսն աստուածոյ բնութեամբ մերով անորինակաբար, որում կրկնի ծունր ամենայն։

Վասն որոյ եւ մեք պաղատեսցուք առ քեզ Քրիստոս. շնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման, մաքուր աղօթիւք ըստ անմարմնոցն որ յերկինս։

Աղաչանօք աստուածածնին անապական քում ծնողին, զիմանալի աչս սրտից մերոց բացցես ողորմութեամբ հայիլ ՚ի լոյս քո Քրիստոս։

Դատաւոր արդարութեան հաստատեցեր ՚ի մեզ ըզմիտս մեր. դատել զհոգի և ըզմարմին, արդարապէս դատմամբ ըստ օրինաց քոց Քրիստոս։

Իսկ անիրաւ դատաւորին որ ՚ի քաղաք



բնութեան մերոյ, ոչ ունելով զերկիւղ քո սուրբ. եւ անպատկառ ՚ի մարդկանէ ոչ առնելով դատ զըրկելոյն։

Այլ անմահ սուրբ փեսայիդ այրի հոգի իմ պաղատի. ուսոյ զիրաւունս քո իմում դատաւորիս, առնել ինձ դատաստան արդար ընդ ոսոխի մարմնոյ իմոյ։

Մարիամ կոյս անարատ զանապական փեսայդ աղաչեա, զի հաշտեսցի ընդ այրի եղեալ հոգիս, եւ միաւորեսցի դարձեալ սիրով ընդ հեռացեալս ՚ի նմանէ։

Որ զտիրականն կերպարան ըզգեցուցեր ծառային. եւ զարդարեալ փառօք եդեալ ՚ի դրախտին. օրհնեալ ես տէր Աստուած հարցըն մերոց։

Որ ճաշակմամբ պտղոյն մահու յանմահ կենաց մեռաք. իսկ գալստեամբ քո վերստին փակեալ դրախտին դուռըն բացաւ. օրհ։

Որ փոխանակ մահաբերին որով անէծքըն տըրտմագին, մեզ փայտ կենաց ետուր զխաչ քո, լուծեր նովաւ ըզկապ մահու. օրհնեալ ես։

Որ ապրեցոյց զՆոյ տապանաւըն պահե-
լով հայր աշխարհի, եւ զհեղեղ մեղաց
մարդկան հեղեղաւ ջուրց դադարեցոյց.
Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Որ 'ի ծով այս աշխարհի շինեաց տապան
զեկեղեցի, եւ 'ի սմա զօժանդակեալ հո-
գիս փրկեաց 'ի ջուրց մեղաց. Եւ բարձր։

Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ, եր-
կիր բանաւոր արեգականն ծագման. լեր
բարեխօս վասն անձանց մերոց։

Խնդա տաճար բանին Աստուծոյ. բար-
ձող տրտմութեան նախամօրն Եւայի.
լեր բարե։

Ցնծա իմանալի արեւելք. քանզի քեւ ծա-
գեաց մեզ լոյս երեսաց Քրիստոս. լեր բա։

Ուրախ լեր եկեղեցի սուրբ 'ի գալըս-
տեան սուրբ միածնին. ուրախ լեր եւ ցըն-
ծա հանդերձ ամենայն սրբովք։

Խնդա յոյժ դուստր վերին Սիոնի. ահա
Թագաւոր քո գայ նստեալ 'ի յաւանակի
նորոյ. արդար եւ փրկիչ փրկել եւ կեցու-
ցանել։

Զուարճացիր եւ բերկրեա ժողովուրդ Աս-



տուծոյ. մատո զոստըս ծաղկեալըս հաւա-
տով եւ ասա. օրհնեալ որ եկիրդ Թագա-
ւոր տիեզերաց։

Զկնի երկիցս շրջելոյ՝ շուրջ զԳերեզմանաւ յերրորդին
գնան 'ի սուրբ Պատանատեղին երգելով։

Դկ. Յիսուս միածինն անմահութեանց
պարգեւատուն երեւեցաւ մեզ, խա-
փանեաց զզօրութիւն մահու։

Բըղխմամբ արտասուաց Մարիամու եւ
Մարթայի անկեալ առ ոտըն Տեառն,
խնդրէին զնորոգումն եղբօրն։

Բանիւ բանն Աստուած կենդանագործեաց
ըզՂազարոս 'ի Թաղմանէ, եւ եկեալ
արտաքս անապական։ ✗

Խաչիւ քո Քրիստոս երկըրպագեն արա-
րածք ամենայն, որ 'ի փրկութիւն մեզ
կանգնեցաւ. սա եղիցի մեզ պահապան
յաղթող, ապրեցուցանել ըզմեզ 'ի պատ-
րանաց բանսարկուին։

Ի սմա բարձրացար բարձող անիծից, որ
փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովել
ըզհեռացեալըն կենսաբեր փայտիւն. ապ։

Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սմա սպասէին արգելեալքն 'ի մեղսասէր բանտին. որ ազատեաց ըզմեզ 'ի պատրանաց բանսարկուին։

Սուրբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քում սրբոյ. որով դատապարտեալ պարտեցաւ Թշնամին։

Սովաւ պահպանեա զժողովուրդս քո Քրիստոս. որով երկրպագեմք քեզ ընդ Հօր եւ Հոգւոյն։

Ի քեզ ապաւինիմք Քրիստոս որ գալոցդ ես խաչիւ. որպէս զի փրկեսցես ըզմեզ յայնմ աւուր ահեղ ատենին։

Ի սուրբ Պատանատեղին շրջապատ դասաւորեալ կարգ 'ի կարգ յաջմէ եւ 'ի ձախմէ Թափօրապետին* երգեն 'ի ձայն. Ալէլուիա ալէ". Ի խորոց կարդացի առ քեզ Տէր՝ Տէր՝ լուր ձայնի իմում։ Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօ".

Սարկաւագն. Որթի։

Աւետարանընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա".

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։



Վասն փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ 'ի գերեզմանն. եւ էր այր մի, եւ վէմ մի եդեալ 'ի վերայ նորա։

Եւ ասէ Յիսուս. 'ի բաց արարէք զվէմդ. ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն. Տէր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։

Ասէ ցնա Յիսուս. ոչ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես, տեսցես զփառսն Աստուծոյ։

Եւ իբրեւ 'ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր 'ի վեր, եւ ասէ. Հայր՝ գոհանամ զքէն, զի լուար ինձ։

Եւ ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ. այլ վասն ժողովրդեանս որ շուրջ կան՝ առնեմ, զի հաւատասցեն՝ թէ դու առաքեցեր զիս։

Զայս իբրեւ ասաց, 'ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ. Ղազարէ՝ արի եկ արտաքս։

Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք, եւ ձեռօքն երիզապնտօք, եւ երեսօքն վարշամակապատօք. եւ ասէ ցնոսա Յիսուս. լուծէք զդա՝ եւ թողէք երթալ։

Բազումք 'ի Հրէիցն՝ որք եկեալ էին առ Մարիամանս, իբրեւ տեսին զոր զարարն՝ հաւատացին 'ի նա։

Եւ ոմանք 'ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն, և պատմեցին նոցա՝ զոր արարն Յիսուս։

Թափօրապետն. Հոգւոյն հանգուցելոյ Քրիստոս Աստուած"։
Սարկաւագն. Եւ ևս խաղաղու"։ Վասն հանգուցեալ հո"։
Աւետարան ընթերցողն. Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ"։
Սարկաւագն. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ"։

Եւ գնան 'ի դուռն Գերեզմանին ասելով։

բկ. Ընդ լուսափայլ զուարթնոյն ըզյարուցեալն օրհնեսցուք. և մաղթելով խնդրեսցուք, մաքրել ըզմեզ 'ի մեղաց։
Ընդ խնկաբեր սուրբ կանանցն անմահ բուրմանն անուշից, խունկս աղօթից մատուսցուք, մաք։
Ընդ իւղաբերիցն արտասուս զմարդկան բարձողն արտասուաց պաղատեսցուք արտասուօք, մաք։
Ընդ Քրիստոսի պահելով յաղթող լիցուք փորձողին. և ընդ հրեշտակս երգեսցուք, փառք 'ի բարձունս Աստուծոյ։

Գան 'ի դուռն Սուրբ Գերեզմանին։

Թափօրականքն. Ի ձայն ասեն. Ալէլուիա ալէլուիա.
Գովեա Երուսաղէմ, զՏէր։ Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն։



Սարկաւագն. Ալէլուիա Որթի։
Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա"։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած.

Յետ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի Գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս։
Իբրեւ տեսին զնա, երկիրպագին նմա. և ոմանք յերկուացան։
Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։
Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ՝ և Հոգւոյն Սրբոյ։
Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զորինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ 'ի կատարած աշխարհի։

Թափօրականքն ասեն, Ձայնաւոր Տէր ողորմեա. Երգ։

Գերեզմանիդ՝ քո համբուրման,
Գողգոթայիդ՝ տեղւոյդ զենման.
Սուրբ Տաճարիս՝ երկնանըման,
Արա արժան՝ զամենեսեան։

Միջնորդութեամբ սրբոյ Գերեզմանիդ։
Ընկալ Տէր և ողորմեա։

Սարկաւագն. Աղաչեսցուք զկենսատուն Փրկիչն մեր Քրիստոս".
Թափօրականքն. Կեցո Տէր։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո".

Աւետարան ընթերցողն. Անկեալ առաջի քո բարերար և բազումողորմ Աստուած, աղաչեմք ամենայն սրտիւք մերովք և խնդրեմք զգթութիւն 'ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր՝ զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն Որդւոյ 'ի Հօրէ, տացի ձեզ։

Շնորհեա և այժմ հաւատացելոցս 'ի քեզ՝ և կատարեա 'ի բարի զխնդրուածս մեր. զի 'ի քեզ եմք ապաւինեալ։

Եւ քո առատ ողորմութեամբդ մխիթարեա զմեզ 'ի կեանս այսմիկ. և առաջնորդեալ հասո անճառ երկնից արքայութիւնդ 'ի փառաբանութիւն և 'ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ և"։

Դպիրն. Յիշեա Տէր զպաշտօնեայս քո, զծնողս մեր զվարդա".
Աւետարան ընթերցողն. Բարերար և բազումողորմ Աստուած".
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".



Եւ շուրջ զԳերեզմանաւ ընդ սուրբ Պատանատեղին՝ գնան 'ի սուրբ Լուսաւորիչ ասելով.

Ո՛րքունորէ՜ն բացատրեսցո՞ւք զծածկեալ խորհուրդըն ծանիցուք. զի՞ լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց տե. Նայլն. Տէս յէջ 9։

Անդ 'ի սուրբ Լուսաւորիչ.

Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սո".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս".
Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո".
Ապա բազմութեամբ եկեղեցականաց՝ գան 'ի սուրբ Յակոբ։





Ծերքն ոստովք ձիթենեօք, և տղայքն ոստովք արմաւենեօք և երամ երամ դասուքն աղաղակէին. Ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանունն Տեառն։

# ԿԱՆՈՆ

## ՂԱԶԱՐՈՍԻ ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ

Շաբաթ օր յիններորդ ժամու հարկանի կոչնակ 'ի սուրբ Յակոբ. գնան 'ի սուրբ Յարութիւն ամենայն բազմութեամբ. ըստ առաջնոց հանդիսաւոր աւուրց սովորութեանց և կարգաւորութեանց կատարեն զհանդէս Հրաշափառի եւ ելեալ 'ի Վերնատուն՝ զերեկոյեան ժամերգութիւնն պաշտեն, և ապա դառնան 'ի սուրբ Յակոբ։

---

## ԿԻՒՐԱԿԻ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Ի մէջ գիշերի հարկանի կոչնակ 'ի սուրբ Յակոբ. զկնի աւագ դրանն տան ամենայն արանց արմաւենի եւ գնան 'ի սուրբ Յարութիւն։ Զկնի աւարտման աստուածընկալ սուրբ Գերեզմանի Պատարագին, 'ի սուրբ Վերնատան սկսանին պաշտել զգիշերային ժամերգութիւնն։ Ապա հարկանի զոյգ կոչնակ և անդ մատչի հաշտարար Պատարագ։

Զկնի Առաքելոցին զգեստաւորի Թափօրապետն։

Յաւարտ սուրբ Պատարագին,

Նախասարկաւագն ձայնէ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա".
Թափօրապետն. Խաչակնքեալ ասէ. Օրհնութիւն և փառք".
Ժամասացն ըստ դասին՝ երգէ քաղցրաձայն։ Որ զերկնաւորս".

Եւ իջանեն դասակարգ 'ի վայր և շրջին շուրջ զԳերեզմանաւ շար 'ի շար հանդարտաքայլ ասելով,

Բջ. Որ ըզխորհուրդ քո զանճառելին յառաջագոյն գուշակեցեր, մարգարէիւքն խա-

րայելի զօրս ընտրեցեր յետ Մովսիսի. որք
խօսեցան Հոգւովդ Սրբով բազմապատիկ
օրինակօք. տո՛ւր մեզ Փրկիչ ողորմու-
թիւն և ըզմեծագոյն ըզթողութիւն։

2 Ի մերձենալ ամաց վերջին զոր տեսանող-
քըն ծանուցին, ըզհասանել մեր փրկութ-
եան ՚ի վախճան ժամանակին. երեւեցար ՚ի
մէջ մարդկան զգեցեալ ըզկերպ ծառայա-
կան. տո՛ւր։

3 Ի վեցերորդ աւուր զԱդամ ստեղծեր ՚ի
տիպ քո տիրական. որ ոչ պահեալ ըզպա-
տուիրանըն մերկացաւ ըզպատմուճանն. իսկ
նոր Ադամդ ՚ի վեց դարուն այց արարեր կո-
րուսելոյն. տո՛ւր։

4 Տաճար լուսոյ անըստուերին և առագաստ
անճառ բանին. որ ըզնախնւոյ մերն Եւայի
բարձեր զանէծսըն տրտմալի. հայցեա
յորդւոյ քո միածնի նոր հաշտութեանըն
միջնորդի, բառնալ ՚ի մէնջ ըզխռովու-
թիւն եւ տալ զոգւոց խաղաղութիւն։

5 Ըստ աւետեաց մարգարէին որ առ-
փրկեալքս արեամբ գառին, ցընծամք
եւ մեք ծառք անտառի ընդ գալուստ



անտառնըդ կրկնակի. շնորհեա մեզ Տէր ընդ
արդարոցն ընդ առ ՚ի քէն տընկեալ ծա-
ռոցն, այժըմ յուսով զուարճանալ եւ
յերկրորդին ընդ քեզ ցընծալ։

6 Սըմին նըման տայ աւետիս Զաքարիաս նոր
Սիոնի, եթէ ուրախ լեր ահա գայ առ
քեզ խոնարհ եւ հեզ արքայ. նըստեալ ՚ի
յէշ եւ յաւանակ կըրկին ազանց գոլ օրի-
նակ. նըստեալըդ յաթոռ քերովբէից նիստ
գըթութեամբ ՚ի մեր հոգիս։

7 Զահեղ փառաց քոց Երեւումն որ լինելոց
է յերկրորդումն, ետես Դաւիթ յառա-
ջագոյն ծանոյց կանխաւ ազդմամբ Հոգւոյն,
թէ յայտնապէս Աստուած գայցէ հուր
առաջի իւր բորբոքէ. յայնժամ Յիսուս ՚ի
մեզ խնայեա գըթած Քրիստոս եւ ողորմեա։

8 Աստուածածին անհարսանցեալ յերկրէ
յերկինս հարսն ընծայեալ. յորժամ բազ-
միս լուսոյ նըման քո միածնիդ յաջակող-
մեան. յայնժամ մաղթեա ընդ մեր ըզնոյն
փրկել ըզմեզ յահեղ բոցոյն, համադա-
սել ընդ արդարոց երգել ըզփառս ընդ երկ-
նայնոյն։

Զկնի երկիցս շրջելոյ՝ մինչ անցանեն զմատուռն խորանոյ,
դնեն աթոռ Սրբազան Պատրիարքին ։
Ասի Սաղմոս Թիւ, Ալէլուիա ալէլուիա .
Լերինք ցնծասցեն առաջի Տեառն զի գայ, զի հասեալ է
Տէր ՚ի դատել զերկիր ։

Ընթերցուածս յԵրգոց երգոյն Սողոմոնի ։

Ձայն եղբօր որդւոյ իմոյ . ահաւասիկ սա եկն վազելով ՚ի վերայ լերանց՝ և խայտալով ՚ի վերայ բլրոց ։

Նման է եղբօր որդին իմ այծեման կամ որթուց եղանց ՚ի վերայ լերանց Բեթելայ ։

Արի՛ եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ. վասն զի ահա ձմեռն էանց, անձրեւք անցին և գնացեալ մեկնեցան ։

Ծաղիկք երեւեցան յերկրի, և ժամանակ յատանելոյ եհաս ։

Ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում . և թզենի ընձիւղեաց զբողբոջ իւր . այգիք մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց ։

Արի եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ . եկ ընդ հովանեաւ վիմին մերձ առ նախապարիսպն ։

Ցո՛յց ինձ զդէմս քո, և լսելի՛ արա ինձ զբարբառ քո . վասն զի դէմք քո գեղեցիկ են և



բարբառ քո քաղցր . կալարո՛ւք մեզ աղուեսունս փոքունս՝ զապականիչս այգեաց, և այգիք մեր ծաղկեսցին ։

Եղբօրորդին իմ ինձ և ես նմա . որ հովուէն ՚ի մէջ շուշանաց ։

Իջցէ եղբօր որդին իմ ՚ի պարտէզ իւր . և կերիցէ զպտուղ ծառոց իւրոց ։

Տեսին զնա դստերք՝ եւ երանեցին նմա . Թագուհիք և հարճք գովեցին զնա ։

Ո՞վ է սա՝ որ երեւեալս է իբրեւ զառաւօտ, գեղեցիկ որպէս լուսին, ընտիր իբրեւ զարեգակն . իբրեւ զհիացումն կարգեալ . ՚ի պարտէզս ընկուզաց իջի հայիլ յարմտիս ուղխից . տեսանել թէ ծաղկեա՞լ իցէ որթն, ծաղկեա՞լ իցէ նշենին, եւ փթթեա՞լ իցէ նռնենին . անդ տաց զստինս իմ քեզ ։

Ընթերցուածս յԷսայեա մարգարէ է ։

Ասացէք դստեր Սիոնի, ահաւասիկ Փրկիչ քո հասեալ գայ՝ և ունի զվարձս իւր ընդ իւր և գործ իւր առաջի երեսաց իւրոց . Եւ կոչեսցէ զնա ժողովուրդ սուրբ փրկեալ ՚ի Տեառնէ, և դու կոչեսցիս խնդրեալ քաղաք՝ և ո՛չ լքեալ ։

Պօղոսի առաքելոյն յեփեսացւոց թղթոյն է ընթերցուածս։

Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս 'ի Քրիստոս. որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա՝ սիրով։

Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, 'ի նոյն. ըստ հաճութեան կամաց իւրոց, 'ի գովեստ փառաց շնորհաց իւրոց, որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն. որով ունիմք զփրկութիւն 'ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց ըստ մեծութեան շնորհաց իւրոց. որ առաւելաւ 'ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ։

Եցոյց մեզ զխորհուրդ կամաց իւրոց, ըստ հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եդ նովաւ, 'ի տնտեսութեան լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսիւ որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի, 'ի նոյն։



Ասմ ձայնաւոր. Ալէլուիա ալէլուիա։ Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն, օրհնեալ որ գալոց ես։

Սարկաւագն. Ոռթի։

Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրաչանչն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա՛.

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մարկոսի։

Թափօրաչանչն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ.
Ասէ Աստուած։

Ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ գան յԵրիքով. եւ ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտօքն և բազում ժողովրդովք, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի։

Իբրեւ լուաւ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել. Որդի Դաւթի Յիսուս, ողորմեա՛ց ինձ։

Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ. և նա առաւել եւս աղաղակէր. Որդի Դաւթի, ողորմեա՛ց ինձ։

Զտեղի ա՛ռ Յիսուս, և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. Քաջալերեա՛ց, արի՝ կոչէ զքեզ։

Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յիսուս։

Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ.
Զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ։
Ասէ ցնա կոյրն. Ռաբբունի, զի բացայց։
Եւ Յիսուս ասէ ցնա. Ե՛րթ, հաւատք քո
կեցուցին զքեզ։
Եւ վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ
նորա ՚ի ճանապարհին։
Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ ՚ի
Բեթփագէ եւ ՚ի Բեթանիա մօտ ՚ի լեառն
Ձիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց
անտի, եւ ասէ ցնոսա. Երթա՛յք դուք ՚ի
գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյն ժամայն
իբրեւ մտանէք ՚ի նա գտանիցէք յաւանակ
մի կապեալ. յորոյ վերայ ոչ ո՛ք ՚ի մարդկանէ
նստաւ, լուծէ՛ք զնա և ածէ՛ք։
Եւ եթէ ոք ասիցէ ցձեզ՝ եթէ զի՞ լուծա֊
նէք զյաւանակդ, ասասջիք՝ եթէ Տեառն
իւրում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ
զնա այսր։
Չոգան և գտին զյաւանակն կապեալ առ
դուրս արտաքոյ ՚ի փողոցի անդ, և լուծին
զնա։
Եւ ոմանք յորոց անդ կային, ասեն ցնոսա.
Զի՞ գործէք. զի լուծանէք զյաւանակդ։
Եւ նոքա ասեն ցնոսա որպէս ասացն Յի֊
սուս. և թոյլ ետուն նոցա։



Ածին զյաւանակն առ Յիսուս, եւ արկա֊
նեն ՚ի վերայ նորա հանդերձս, եւ նստաւ
՚ի վերայ նորա։
Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարա֊
ծանէին ՚ի վերայ ճանապարհին, և այլք ոստս
՚ի ծառոց հատանէին՝ և արկանէին զճանա֊
պարհաւն։
Եւ որ առաջի եւ զկնի երթային՝ աղաղա֊
կէին և ասէին. Ովսաննա Բարձրելոյն. օրհ֊
նեալ որ գայդ յանուն Տեառն. օրհնեալ
թագաւորութիւնդ հօր մերոյ Դաւթի.
խաղաղութիւն յերկինս և փառք ՚ի բար֊
ձունս։
Եւ եմուտ Յիսուս յԵրուսաղէմ ՚ի Տաճարն,
և հայեցաւ շուրջ զամենեքումբք. և զի էր
երեկոյացեալ ժամն, ել ՚ի Բեթանիա երկո֊
տասանիւքն հանդերձ։

Սարկաւագունք. Զայնաւոր Եւ եւս խաղաղութեան զՏէր ա՛.
Եւ տեառնագրեսցեն զանդաստան։

Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի ս՛.
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց՛.

Դպիրն. Յորժամ եկեալ կենարարդ ՚ի գե֊
րեզմանն Ղազարու. յորժամ եկեալ կենա֊
րարդ ՚ի գերեզմանն Ղազարու. աւետաւոր
ձայնիւդ աղաղակէիր ասելով՝ Ղազարէ,
արի՛ եկ արտաքս։

Իսկ մեռեալն ՚ի գերեզմանէն յարեաւ . և նոյն ինքն զանմահութեան պարգեւսն եւ տուր սիրելւոյդ, և աստուածային ձայնիւդ ՚ի գերեզմանէն կոչեցեր ։

Վասն որոյ՝ և մանկունքն Եբրայեցւոց ոստովք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո ։

Ընդ նոսին և մեք ասեմք . Ովսաննա՛ օրհնեալ է գալուստ քո . օրհնութիւն ՚ի բարձունս . օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն ։

Սարկաւագն . Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն՛՛.

Թափօրապետն . Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ՛՛.

Գնան ՚ի սուրբ Պատանատեղին երգելով.

Դկ . Յիսուս միածինն անմահութեանց պարգեւատուն երեւեցաւ մեզ, խափանեաց զզօրութիւն մահու ։

Բղխմամբ արտասուաց Մարիամու եւ Մարթայի անկեալ առ ոտսն Տեառն, խնդրէին զնորոգումն եղբօրն ։

Բանիւ Բանն Աստուած կենդանագործեաց ըզՂազարոս ՚ի թաղմանէ, եւ եկեալ արտաքս անապական ։



Ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ ։

Որ քան զերկինս բարձրագոյն Մարիամ, պարծանք եկեղեցւոյ . Քրիստոս ։

Որ քան զարեգակն պայծառագոյն Մարիամ, մի դադարեր բարեխօսել վասն մեր, Քրիստոս ։

Սուրբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քում սրբոյ . որով դատապարտեալ պարտեցաւ թշնամին ։

Սովաւ պահպանեա զժողովուրդս քո Քրիստոս . որով երկրպագեմք քեզ ընդ Հօր եւ Հոգւոյն ։

Փառք Հօր և Որդւոյ և .

Ի քեզ ապաւինիմք Քրիստոս որ գալոցդ ես խաչիւ . որպէս զի փրկեսցես ըզմեզ յայնմ աւուր ահեղ ատենին ։

Այժմ և միշտ և յաւիտեանս .

Այլ կենդանիքս օրհնեմք ըզքեզ Քրիստոս թագաւոր յաւիտենից . որ փառօք փառաւորիս ՚ի յերկնայնոց և յերկրայնոցս . յիս մարդասիրեա բազմագութ Փրկիչ եւ փարատեա զցաւս անձին իմոյ ։

Ի սուրբ Պատանատեղին շրջապատ դասաւորեալ կարգ 'ի կարգ յաջմէ և 'ի ձախմէ Թափօրապետին՝ երգեն 'ի ձայն. Ալէլուիա ալէ". Ի խորոց կարդացի առ քեզ Տէր՝ Տէր՝ լուր ձայնի իմում։ Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօ".

Սարկաւագն. Ալէլուիա Որթի։

Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա".

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի

որ ըստ Յովհաննու։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։

Ասէ Աստուած։

Վասն փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս 'ի Բեթանիա, 'ի գեղջէ Մարեմայ եւ Մարթայի քեռ նորա։

Այս այն Մարիամ էր՝ որ էօծ զՏէրն իւղով, եւ ջնջեաց զոտս նորա հերով իւրով. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր։

Առաքեցին առ նա քորքն նորա և ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է։

Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ. Այն հիւանդութիւն չէ՛ 'ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ, զի փառաւոր լիցի Որդի Աստուծոյ այնուիկ։

Եւ սիրէր Յիսուս զՄարիամ եւ զՄարթա զքոյր նորա և զՂազար։



Իբրեւ լուաւ թէ հիւանդացեալ է, ընդ տեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս։

Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. Եկա՛յք երթիցուք միւսանգամ՝ 'ի Հրէաստան։

Ասեն ցնա աշակերտքն. Ռա՛բբի, այժմ եւս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ առնել, և դարձեա՞լ երթաս անդրէն։

Պատասխանի ետ Յիսուս. Ո՞չ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ 'ի տունջեան՝ ո՛չ գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. ապա թէ ոք գնայ 'ի գիշերի՝ գայթակղի, զի լոյս ո՛չ գոյ ընդ նմա։

Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա։

Ասեն ցնա աշակերտքն. Տէ՛ր, եթէ ննջեաց՝ ապա ապրի։

Այլ Յիսուս վասն մահու նորա ասէր. Նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէր։

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս. Ղազարոս մեռաւ. և ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց արդ եկա՛յք երթիցուք առ նա։

Ասէ Թովմաս՝ անուանեալն երկուորեակ՝

ցաշակերտակիցսն. Օն եկայք՝ և մեք զի ընդ նմա մեռցուք։

Եկն Յիսուս՝ եւ եգիտ զնա չորեքօրեայ 'ի գերեզմանի։

Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ, իբրեւ ասպարիսօք հնգետասան. բազումք 'ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա եւ Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն։

Մարթա իբրեւ լուաւ՝ թէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա. բայց Մարիամ նստէր անդէն 'ի տան։

Ասէ Մարթա ցՅիսուս. Տէր, եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. այլ եւ արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած։

Ասէ ցնա Յիսուս. Յարիցէ եղբայրն քո։

Ասէ ցնա Մարթա. Գիտեմ զի յարիցէ 'ի յարութեան՝ յաւուրն յետնում։

Ասէ ցնա Յիսուս. Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ։

Եւ ամենայն որ կենդանի է և հաւատայ յիս, մի՛ մեռցի 'ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ։

Ասէ ցնա. այո, Տէր, ես հաւատացի՝ եթէ



դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր։

Եւ զայս իբրեւ ասաց, գնաց եւ կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն և ասէ. Վարդապետն եկեալ է՝ և կոչէ զքեզ։

Նա իբրեւ լուաւ, յարեաւ վաղվաղակի, և եկն առ նա։

Զեւ եւս էր եկեալ Յիսուս 'ի գեօղն, այլ էր անդէն 'ի տեղւոջն՝ ուր ընդ առաջ եղեւ նմա Մարթա։

Իսկ Հրէայքն որք էին ընդ նմա 'ի տան անդ եւ մխիթարէին զնա, իբրեւ տեսին զՄարիամ՝ թէ յարեաւ վաղվաղակի եւ գնաց, գնացին եւ նոքա զհետ նորա. համարէին թէ 'ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ։

Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր էրն Յիսուս՝ և ետես զնա, անկաւ առ ոտս նորա և ասէ. Տէ՛ր, եթէ աստ էիր դիպեալ՝ ո՛չ էր մեռեալ եղբայրն իմ։

Յիսուս իբրեւ ետես զնա զի լայր, և որք ընդ նմայն էին Հրէայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրեւ զայրացեալ, և ասէ. Ուր եդիք զնա։

Ասեն ցնա. Տէ՛ր, եկ և տե՛ս։

Եւ արտասուեաց Յիսուս։

Ասէին Հրէայքն. Տեսէ՛ք որչափ սիրէր զնա։

Կէսքն 'ի նոցանէ ասէին. Ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կուրին, առնել զի եւ սա մի՛ մեռցի։

Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ 'ի գերեզմանն. եւ էր այր մի, եւ վէմ մի եդեալ 'ի վերայ նորա։

Եւ ասէ Յիսուս. 'ի բաց արարէք զվէմդ. Ասէ ցնա Մարթա քոյր մեռելոյն. Տէ՛ր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։

Ասէ ցնա Յիսուս. Ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես՝ տեսցես զփառս Աստուծոյ։

Եւ իբրեւ 'ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր 'ի վեր, եւ ասէ. Հա՛յր, գոհանամ զքէն զի լուար ինձ. եւ ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ, այլ վասն ժողովրդեանս որ շուրջ կան առնեմ՝ զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս։

Զայս իբրեւ ասաց, 'ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ. Ղազարէ, արի՛ եկ արտաքս։

Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք, եւ ձեռօքն երիզապնդօք, եւ երեսօքն վարշամակապատօք. եւ ասէ ցնոսա Յիսուս. Լուծէ՛ք զդա եւ թողէք երթալ։



Բազումք 'ի Հրէիցն՝ որք եկեալ էին առ Մարիամանս, իբրեւ տեսին զոր արարն՝ հաւատացին 'ի նա։

Եւ ոմանք 'ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն, եւ պատմեցին նոցա՝ զոր արարն Յիսուս։

Թափօրապետն. Հոգւոյն հանգուցելոյ Քրիստոս Աստուած".
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութ". Վասն հանգուցեալ հո".
Ատենապետն ընթերցողն. Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ".
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգ".

Եւ գնան 'ի դուռն կենսատու Գերեզմանին ասելով.

Բկ. Ուրախ լեր եկեղեցի սուրբ 'ի գալստեան սուրբ միածնին. ուրախ լեր եւ ցնծա հանդերձ ամենայն սրբովք։

Խնդա յոյժ դուստր Սիոնի. ահա Թագաւոր քո գայ նստեալ 'ի յաւանակի նորոյ. արդար եւ փրկիչ փրկել եւ կեցուցանել։

Զուարճացիր եւ բերկրեա ժողովուրդ աստուծոյ. մատո զոստս ծաղկեալս հաւատով եւ ասա. օրհնեալ որ եկիրդ Թագաւոր տիեզերաց։

Զքրիստոս Թագաւորն որ էն 'ի յա-

Թոռ փառաց. տեսաք 'ի յերկրի նըստեալ 'ի նոր յաւանակն :

Ը՛նդ առաջ ելեալ սրբոյն դասք երամյեցւոց. ծերքն ստովք ձիթենեօք եւ տղայքն արմաւենեօք :

Մխաբանական ձայնիւ գոչէին երգ նոր. բարեբանելով զանճառն Թագաւորն :

Առաջի դրան Գերեզմանին 'ի ձայն ասեն. Ալէլուիա ալէ". Գովեա Երուսաղէմ, զՏէր : Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն :

Սարկաւագն. Ալէլուիա Որթի :
Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն :
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում : Երկիւղածութը լուա".

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի :

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր : Պռօսխումէ :
Ասէ Աստուած :

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի Գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս. իբրեւ տեսին զնա՝ երկիրպագին նմա, և ոմանք յերկուացան :
Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանու-



թիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ :
Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :
Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ : Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ 'ի կատարած աշխարհի :

Թափօրականքն ասեն, ձայնաւոր Տէր ողորմեա. Երգ :

Գերեզմանիդ՝ քո համբուրման,
Գողգոթայիդ՝ տեղւոյդ զենման.
Սուրբ Տաճարիս՝ երկնանըման,
Արա արժան՝ զամենեսեան :
Շնորհիւ սրբոյ Գերեզմանիդ :
Ընկալ Տէր և ողորմեա.

Սարկաւագն. Աղաչեսցուք զկենսատու Փրկիչն մեր Քրիս".
Թափօրականքն. Կեցո Տէր : Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո".

Աւետարան ընթերցողն. Անկեալ առաջի քո բարերար և բազումողորմ Աստուած, աղաչեմք ամենայն սրտիւք մերովք, և խնդրեմք զգթութիւն 'ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր՝ զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն Որդւոյ 'ի Հօրէ, տայցի ձեզ :

Շնորհեա՛ և այժմ հաւատացելոցս ՚ի քեզ, և կատարեա՛ ՚ի բարի զխնդրուածս մեր, զի ՚ի քեզ եմք ապաւինեալ։

Եւ քո առատ ողորմութեամբդ մխիթարեա՛ զմեզ ՚ի կեանս յայսոսիկ. և առաջնորդեալ հասո՛ յանճառ երկնից արքայութիւնդ, ՚ի փառաբանութիւն և ՚ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ և՛։

Դպիրն. Յիշեա՛ Տէր զպաշտօնեայս քո, զծնողսն մեր զվար".
Աւետարանն ընթերցողն. Բարերար և բազումողորմ Աստուած".
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ շուրջ զԳերեզմանաւ գնան ելանել ՚ի սուրբ Վերնատուն. ասելով Շարական։

Բա՛բունորէ՜ն բացա՛տրեսցո՞ւք զծածկեա՛լ խո՛րհուրդըն ծա՛նիցո՛ւք. զի՞ լոյսն անտե՜ս իմա՛նալի՞ մաքո՛ւր հո՛գւոյ տե. Ղուկ. Տէ. յէշ Գ.
՚ի սուրբ Վերնատուն։

Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սա".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս.
Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն.
Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո".
Օրհնեա՛լք եղերո՛ւք ՚ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթա՛յք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն.

Ապա բազմութեամբ եկեղեցականաց՝ գան ՚ի սուրբ Յակոբ։

# ԿԱՆՈՆ

## ԶԱՏԿԻ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ

### ՇԱԲԱԹ ՕՐ

Ի ՎԵՑԵՐՈՐԴ ժամու աւուր հարկանի կոչնակ ՚ի սուրբ Յակոբ, տէրունական բարեպաշտօն ուխտաւորք՝ մոմ ՚ի ձեռին գնան ՚ի սուրբ Յարութիւն։

Ապա Սրբազան Պատրիարքն միաբան եկեղեցականօք երթեալ՝ ելանէ ՚ի Վերնատուն և նստի ՚ի ներքոյ կամարին, որ հայի ՚ի վերայ կենսատու Գերեզմանին Քրիստոսի։ Յոյնք ելանեն ՚ի Թափօր եւ շրջին երիցս զԳերեզմանաւ. ապա մեր Լուսաւորեայ վառողն և Յունաց, երկոտասան մոմ ՚ի ձեռս իւրաքանչիւրոց մտանեն ՚ի սուրբ Գերեզման եւ լուցանեն ՚ի լուսաւոր կանթեղէ Գերեզմանին Քրիստոսի։ Իսկ Խպտին և Ասորին՝ ՚ի մեր լուսաւորեայէն լուցանեն՝ արտաքոյ ներքին դրան, առ Վիմի Հրեշտակին ըստ նախնական հին սովորութեան իւրեանց։ Մերքն տանին նախ Սրբազան Պատրիարքին, ՚ի նմանէ՝ և ՚ի միմեանց վառեն զմոմ՝ զորս ՚ի ձեռս ունին պատրաստ. ՚ի նշանակ լուսափառ Յարութեանն Քրիստոսի, որոյ ՚ի փառս պաշտի և յամենայն համատարած Եկեղեցիս Հայաստանեայց եւ այլոց Քրիստոնէից։ Ապա ՚ի սենեակ Տեսչին զգեստաւորի Թափօրապետն, որ է Լուսաւորեայ վառողն, և ըստ օրինի միւս Թափօրաց կարգաւորութեան՝ շարադասին Թափօրականքն։

Սարկաւագն՝ ասէ բարձրաձայն, Եւ եւս խաղաղութեան։
Թափօրապետն. Խաչանիշեալ ասէ. Օրհնութիւն և փառք Հօր".

Ժամատուն ըստ դասին՝ երգէ Շարական։

Ակ. Առաքեցար 'ի Հօրէ Բանդ Աստուած 'ի փրկութիւն ազգի մարդկան. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած։

Ի գերեզման իջեր Թագաւոր անմահ եւ 'ի Հօրէ ոչ մեկնեցար, օրհնեմք ըզ։

Ի յերրորդ աւուր յարեար աստուածապէս եւ 'ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո Տէր. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած։

Յարուցեալ Տէրն 'ի գերեզմանէն միածինն որպէս փայլակն, եւ լոյս փառաց ծագեաց յաշխարհս, եւ երկինք եւ երկիրս ցնծային։

Մեծ է՝ յարութիւն աստուածորդւոյն քանզի դրունք երկնից բացեալ եղեն եւ հոտ անուշ բուրեաց յաշխարհս, եւ լցոյց զարարածս ամենայն։

Զօրք երկնից իջեալ էին եւ բանակեալ շուրջ ըզգերեզմանաւն. եւ հոգեղէն բարբառով երգէին. Տէր օրհնեալ է քո յարութիւնդ։



Սքանչելի հրեշտակն Տեառն ցնծութեամբ իջեալ 'ի գերեզմանըն հարկանէր փող յարութեանըն Տեառն։

Ի հարկանել փողոյն պահապանքըն զարհուրեցան եւ եղեն 'ի յահէն որպէս մեռեալ։

Ձայն եղեւ 'ի հրեշտակէն բարբառ եղեւ ուրախութեան Տէր յարեաւ. փառք յարութեանըն Տեառն։

Դրօշըն փակելովք երեւեալ Յիսուս աշակերտացն եւ ասէր. խաղաղութիւն ընդ ձեզ։

Յետ երից շրջելոյն դասակարգին 'ի դուռն սուրբ գերեզմանին։

Թափօրականք. Ալէլուիա ալէլուիա. Գովեա Երուսաղէմ ըզ″.

Սարկաւագն. Ալէլուիա Որթի։

Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա″.

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ. Ասէ Աստուած։

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի Գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա

Յիսուս. իբրեւ տեսին զնա՝ երկիրպագին
նմա, և ոմանք յերկուացան։
Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց
զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։
Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։
Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ 'ի կատարած աշխարհի։

Ապա ձայնիւ Տէր ողորմեա. Երգ։ Գերեզմանիդ քո համ".
Սարկաւագն. Խնդրեսցուք հաւատով միաբանութբ 'ի Տեա".
Թափօրականքն. Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա՛, Տէր ո".
Աւետարան ընթերցողն. Քում ամենազօր և հրաշալի Յարու"։
Սարկաւագն. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս".
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ շուրջ զԳերեզմանաւ գնան ելանել 'ի Վերնատունն։
Երգելով Շարական։

Բա՛քունորէ՛ն բացա՛տրեսցո՛ւք զծածկեա՛լ
խո՛րհուրդըն ծա՛նիցո՛ւք, զի՞. Ն. այլ. Տէ. յէՉ 9։



Հարկանի զոյգ կոչնակ 'ի Վերնատունն։

Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սո".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց".

Ապա երեկոյեան Ժամերգութիւն և Պատարագ պաշտի ըստ պատշաճի աւուր։ Ոմանք մնան անդ վայելել զշնորհս սուրբ Պատարագին, և ոմանք դառնան 'ի սուրբ Յակոբ վայելել նոյնպէս։





Տուր մեզ շնորհ յորդի շնորհաց,
Զի գին եմք քո անգին կենաց.
Պահեա խաղաղ 'ի պատրանաց,
Եւ յարկածից միշտ թշնամեաց:

# ԿԱՆՈՆ

## ԶԱՏԿԻ ԿԻՒՐԱԿԷ ԳԻՇԵՐ

Հարկանի կոչնակ 'ի սուրբ Յակոբ. Սրբազան Պատրիարքն, և ամենայն եկեղեցականք, և տէրունական ջերմեռանդ ուխտաւորք, երթան 'ի սուրբ Յարութիւն. 'ի սուրբ Վերնատուն սկսանի ժամերգութիւն, ըստ պատշաճի աւուր: Զգեստաւորի Սրբազան Պատրիարքն նախ քան զհարցն. ապա երգելով զհարցի Շարականն՝ իջանեն առաջի դրան կենսատու սուրբ Գերեզմանին, դասակարգեալ շար 'ի շար ըստ աստիճանաց. և ապա գնան շուրջ զԳերեզմանաւ հանդարտաքայլ, ասելով քաղցրաձայն:

Դկ. Այսօր մեծ աւետիք ադամեայ Նախաստեղծին տուաւ. արի որ ննջես լուսատու եղեւ քեզ յարուցեալն Քրիստոս. Աստուած հարցն մերոց:

Այսօր ձայն աւետեաց յեւայի գուշէն լսելիս, դստերքն իւղաբերք. տեսաք յարուցեալ զյաղթութիւնն քո ըզՔրիստոս. Աստուած:

Այսօր հրեշտակք յերկնից իջեալ տան զաւետիս մարդկան. յարեաւ խաչեցեալն եւ յարոյց ըզձեզ ընդ իւրեան. ասաց:
Ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ընդ յաւիտեան:
Այսօր տէրըն մեր յարեաւ. եկայք պարեսցուք ընդ հրեշտակս յաղթական երգով. օրհնեցէք եւ բարձր արա:
Այսօր սիւն լուսոյ ծագեաց սուրբ եկեղեցւոյ յարուցեալն ՚ի մեռելոց քրիստոս, օրհնեցէք եւ բարձր արա:

Յերկրորդ գալստեան առաջի դրանց մատրանաց Յովսէփայ Արեմաթացւոյն և Խպտոց, Սարկաւագն ասէ Քարոզ:

Եկեալքս ամենեքեան ՚ի սուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի, աղաչեսցուք զմիածին որդին աստուծոյ, զտէրն մեր և զփրկիչն Յիսուս Քրիստոս:
Որ էջ փառօք Հօր ՚ի մէջ հնոցին, և փրկեաց զերիս մանկունսն ՚ի Քաղդէացւոց անտի:
Լուսաւոր և սուրբ պահեսցէ զմիտս մեր, զի մի երբէք խաբիցուք մեք ՚ի մեղաց եւ ՚ի ցանկութենէ աշխարհի:



Այլ արժանի եղիցուք պահել զպատուիրանս Նորա, առնուլ զպսակն լուսոյ և կենաց ՚ի յանձինս մեր, զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս տէր մեր, կեցո և ողորմեա:

Թափօրապետն. Հզօր, յաղթող և սքանչելագործ սրբոյ Յա".
Դպիրք. Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և ցնծասցէ հոգի".

Ապա երգելով զՄեծացուսցէի Շարականն, երթան առաջի դրան աստուածընկալ Գերեզմանին, և կանգնին շարադաս ամենայն Թափօրականք: Թափօրապետն մտանէ ընդ դուռն և նստի յաթոռ, որ զկնի արտաքին դրան եդեալ:

Դկ. Աստուածածին տաճար լուսոյ, որ մարմնով պարագրեալ անճառաբար ծընար ըզբանն աստըւած. զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:
Ուրախ լեր եւ բերկրեա մայր եւ կոյս. քանզի ծընեալն ՚ի կուսէդ այսօր մեռելոտին յարութեամբ ծընաւ ՚ի կայս գերեզմանէն. զքեզ բարեբա:
Ցնծա և զուարճացիր Հարսն ՚ի յերկրէ երկնից. քանզի այսօր երկնայնոցն իջեալ տային քեզ զաւետիս յարութեան միածնի որդւոյ քո. զքեզ բարեբա:

Առաջի դրան սուրբ Գերեզմանին.

Սարկաւագունք բարձրաձայն ասեն։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես″.
Վասն սուրբ տեղւոյս շինութեան և բարեկարգութեան, զՏէր աղաչեսցուք։
Վասն ժողովրդեանս որք մտանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաչես″.
Վասն ընդունելոյ զպաղատանս սոցա ըստ մեծի ողորմութեան իւրում, զՏէր աղա″.
Վասն հոգւոցն հան″. Եւ եւս միաբան″.
Զանձինս մեր և զմի″. Ողորմեա մեզ″.

Թափօրականքն. Եղիցի անունն Տեառն օրհնեալ 'ի″. և այլն։

Սարկաւագն. Օրթի.

Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա″.

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ 'ի միաշաբաթւոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն 'ի գերեզման անդր, և տեսանէ զվէմն բարձեալ 'ի դրանց գերեզմանին։



Ապա ընթանայ և գայ առ Սիմոն Պետրոս և առ միւս աշակերտն զոր սիրէր Յիսուս, և ասէ ցնոսա. Բարձին զՏէր 'ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ, ուր եդին զնա։
Ել Պետրոս և միւս աշակերտն՝ և գային 'ի գերեզմանն. ընթանային երկոքեան 'ի միասին։ Եւ միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ փաղագոյն քան զՊետրոս՝ և եկն նախ 'ի գերեզմանն. և խոնարհեալ տեսանէ, զի կային անդ կտաւքն, բայց 'ի ներքս ոչ եմուտ։

Եկն և Սիմոն Պետրոս՝ որ գայր զհետ նորա, և եմուտ 'ի գերեզմանն. և տեսանէ զկտաւսն զի կային անդ. և վարշամակն, որ էր 'ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն։
Յայնժամ եմուտ եւ միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն 'ի գերեզմանն, ետես և հաւատաց. զի չեւ եւս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա 'ի մեռելոց յառնել։
Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն. բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր, եւ մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ 'ի գերեզմանն, և տեսանէ երկուս հրեշտակս 'ի սպիտակս, զի նստէին՝ մի 'ի սնարից և մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։

Եւ նոքա ասեն ցնա. Կին դու, զի՞ լաս: Ասէ ցնոսա. Զի բարձին զՏէրն իմ 'ի գերեզմանէ աստի՝ և ոչ գիտեմ ուր եդին զնա:

Զայս իբրեւ ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր, և ոչ գիտէր թէ Յիսուս իցէ:

Ասէ ցնա Յիսուս. Կին դու, զի՞ լաս, զո՞ խնդրես: Նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա. Տէր, եթէ դու բարձեր զնա, ասա ինձ ուր եդեր զնա, զի ես առից զնա:

Ասէ ցնա Յիսուս. Մարիամ: Եւ նա դարձաւ և ասէ ցնա Եբրայեցերէն. Րաբունի. (որ թարգմանի վարդապետ):

Ասէ ցնա Յիսուս. Մի՛ մերձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ առ Հայրն իմ. այլ երթ դու առ եղբարսն իմ, և ասա ցնոսա. Ելանեմ ես առ Հայրն իմ, և առ Հայր ձեր, եւ Աստուածն իմ և Աստուած ձեր:

Գայ Մարիամ Մագդաղենացի՝ և պատմէ աշակերտացն եթէ ետես նա զՏէր, եւ զայս ինչ ասաց ցնա:

Թափօրականքն. Փառք Յարութեան քո Տէր, ոչ դա"․ և այլն:
Սարկաւագն. Զուարճացեալքս մեծաւ ուրախութեամբ ա".
Աւետարան ընթերցողն. Ամենակալցոյց սրբոյ և մեծի Յարու".
Դպիրք. Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան".



Եւ ելանեն դարձեալ զԳերեզմանաւ ասելով զողորմեայի Շարականն:

Դկ. Այսօր ըղձասէք չարչարանացն Ելից Իսրայէլի փոխեցեր 'ի փրկութիւն հոգւոց զատիկ սուրբ յարութեամբ քո Քրիստոս:

Այսօր ընդ արեանցն օրինակին անբան գառանցն զենմանց պարգեւեցեր մեզ զառն Աստուծոյ զարիւնդ քո փրկական:

Այսօր ընդ անդրանկացն ազատութեան ազատեցեր ըզգերեալսն. պըտուղ կենաց նորընծայեցելոց, եւ անդրանիկ մեռելոց:

Առաջի դրանց մատրանց Խաչոց եւ Յովսէփայ Արեմաթացւոյն զանգի առեալ. Սարկաւագն ասէ.

Երկրպագեմք քեզ, Տէր Աստուած մեր, անցեալքս ընդ երկայնութիւն գիշերիս. և կանխեալքս 'ի տեղւոջ խոստովանութեան՝ մատուցանեմք զառաւօտու աղօթս մեր: Զքեզ, Տէր, օրհնեմք և փառաւորեմք, և զքեզ, Տէր, գոհանամք, որ արժանի արարեր զգիշերս խաղաղութեամբ անցուցանել և հասանել 'ի ժամ առաւօտուս: Արժանաւորեա՛ զմեզ, Տէր, անձառ խոստմանց քոց,

զոր խոստացար սիրելեաց քոց ճշմարիտդ Աստուած՝ Յիսուս Քրիստոս Տէր մեր. կեցո և ողորմեա՛։

Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մե՛.

Թափօրապետն. Ողորմած, գթած, ճշմարիտ սրբոյ Յարու".

Դպիրք. Ալէլուիա ալէլուիա։ Օրհնեցէք զՏէր երկնից օրհ".

Եւ սակաւիկ յառաջ խաղացեալ՝ բազմի Թափօրապետն յաթոռ՝ որ անդ պատրաստեալ։ Թափօրականք երգեն զՏէր յերկնիցի Շարականն. այլ յորժամ զվերջի տունն ասիցեն՝ Եպիսկոպոսք, Վարդապետք և Քահանայք զոյգ զոյգ եկեալ նախ՝ համբուրեն զաջ Թափօրապետին, ապա խոնարհեալ յունկն միմեանց՝ աւետեն։

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց։ Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի։

Դկ. Այսօր հրեշտակք 'ի բարձունս ուրախանան ընդ մարդկան. որք իջեալ 'ի յերկնից տան զաւետիս աշխարհի. ցնծացէք այսօր, քրիստոս յարեաւ 'ի մեռելոց։

Այսօր զուարթունն 'ի վիմին խնկաբերից սուրբ կանանցն փողէր ձայնիւ ցնծութեամբ պատմել աշակերտացն ասելով. ցնծացէք այսօր, քրիստոս յար։

Այսօր վիմին հաւատոյ եւ Յովհաննու սիրելւոյ ընդ հակառակս ընթացեալ 'ի գերեզման յարուցելոյն. զոր տեսեալ պատմէին, քրիստոս յար։



Այսօր եւ մեք զուարճացեալք պայծառացուք տօնիւս. ընդ հաշտութեանն Աստուծոյ միմեանց արկցուք զիրկըս սիրով. եւ միաբան գոչեսցուք, Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց։

---

Ձկնի, փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր. և այլն։

Սարկաւագունք՝ ասեն Քարոզ։

Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ. Տէր ողորմեա։

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, ըզՏէր աղաչեսցուք։

Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր աղա.

Վասն հայրապետին մերոյ տեառն (այս անուն) կենաց՝ և փրկութեան հոգւոյ նորին, զՏէր աղա.

Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց, և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղա.

Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց՝ զօրավարաց և զօրաց նոցին, զՏէր աղա.

Վասն զի Տէրն ամենակալ հնազանդեցուս-
ցէ առաջի նոցա զամենայն պատերազմունս
թշնամեաց, զՏէր աղա.
Յաղագս հարց և եղբարց մերոց, որք 'ի գե-
րութեան են եւ 'ի չար ծառայութեան,
զՏէր աղա.
Յաղագս ճանապարհորդաց և նաւորդաց՝
խաղաղութեամբ հասանել 'ի նաւահան-
գիստ բարութեան, զՏէր աղա.
Յաղագս հիւանդաց և ամենայն վշտացելոց՝
փութապէս առողջութեան, զՏէր աղա.
Յաղագս բարեխառնութեան օդոց, անձ-
րեւաց քաղցրութեան և պտղոց առատու-
թեան, զՏէր աղա.
Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից 'ի
սուրբ եկեղեցի աստուծոյ, զՏէր աղա.
Եւ յաղագս այնոցիկ, որք մատնեալք են
'ի ձեռս անօրինաց վասն անուանն քրիս-
տոսի, զՏէր աղա.
Յաղագս հոգւոցն հանգուցելոց, որք ճըշ-
մարիտ և ուղիղ հաւատով 'ի քրիստոս նըն-
ջեցին, զՏէր աղա.
Յաղագս փրկելոյ զմեզ տեառն աստուծոյ՝
յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն,
զՏէր աղա.



Թափօրապետն . Բարեխօս ունիմք սուրբ զՄարիամ զաստուա″.

Յիշեսջի՛ք և զամենայն սուրբս եւ նոքօք,
զՏէր աղաչեսցուք։
Զառաւօտս լուսոյ եւ զառաջիկայ օրս
խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով
'ի Տեառնէ խնդրեսցուք։
Զհրեշտակ խաղա″. Զքաւութիւն և ըզ″.
Զսրբոյ Խաչին մեծ և″. Եւ եւս միաբան″.
Զանձինս մեր և զմի″. Ողորմեաց մեզ Տէր″.

Աղօթք։

Գոհանամք զքէն, Տէր Աստուած մեր, որ
երեւելի լուսով քով զուարճացուցեր զա-
մենայն արարածս քո. իսկ իմանալի լուսով
պատուիրանաց քոց՝ զամենեսեան լուսա-
ւորեցեր զհաւատացեալս 'ի քեզ։ Զօրացո՛
և զմեզ, Տէր, 'ի պահպանութիւն պատուի-
րանաց քոց, 'ի տունջեանս յայսմիկ և յա-
մենայն ժամանակի։ Որպէս զի լուսաւորեալ
մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք, և հան-
դերձեալ բարեացդ հասցուք ընդ ամենայն
սուրբս քո։ Շնորհօք և մարդասիրութեամբ
տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստո-
սի, որում վայելէ փառք, իշխանութիւն և
պատիւ . այժմ և միշտ և յաւի″.

Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութիւն մեր եւ կեանք՝ որ 'ի Հօրէ առաքեցար, միածին որդի աստուծոյ, տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս։ Տո՛ւր մեզ զխաղաղութիւն քո, զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոց՝ փչմամբ քո 'ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր Հոգիդ քո սուրբ։ Որպէս զի և մեք խաղաղացեալք յամենայն աշխարհական սահեցմանց, լիցուք տաճար և բնակարան աստուածային շնորհացդ. եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ Քրիստոս աստուած մեր, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սուրբ աստուած. սուրբ և հզօր. սուրբ և անմահ, որ յա″.

Ապա ասի՝ Սաղմոս Թիւ. Ալէլուիա ալէլուիա։
Քեզ վայելէ օրհնութիւն աստուած 'ի սիոն. և քեզ տա″.

Ընթերցուածս 'ի գործոց առաքելոց։

Զբանն առաջին զոր արարի՝ վասն ամենայնի, ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել, մինչեւ յօրն պատուիրելոյ Առաքելոցն 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ զորս ընտրեացն, և վերացաւ։



Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց, 'ի բազում արուեստս, յաւուրս քառասուն երեւիլ նոցա և ասել վասն արքայութեանն Աստուծոյ։ Եւ 'ի հաղորդել ընդ նոսա հացի՝ պատուէր տայր նոցա յԵրուսաղէմէ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուքըն յինէն։
Զի Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր, այլ դուք մկրտիցիք 'ի Հոգւին սուրբ, ոչ յետ բազմաց ինչ աւուրցս այսոցիկ։
Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա և ասէին. Տէր, եթէ 'ի ժամանակի աստ յայսմիկ հաստուցանելոց իցես զարքայութիւնն Իսրայելի։
Ասէ ցնոսա. Ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան. այլ առջիք զզօրութիւն 'ի հասանել Հոգւոյն սրբոյ 'ի վերայ ձեր, և եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ և յամենայն Հրէաստանի, եւ 'ի Սամարիա, եւ մինչեւ 'ի ծագս երկրի։

Ասի ձայնաւոր. Ալէլուիա ալէլուիա։ Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ։

Սարկաւագն. Ալէլուիա Ոլթի։

Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա"։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մարկոսի։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ արեւագալն, եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին։

Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր վէմն 'ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ։

Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան։

Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ՛ աստ. ահաւադիկ տեղին, ուր եդին զնա։

Այլ երթա՛յք ասացէ՛ք ցաշակերտս նորա և ցՊետրոս, թէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ 'ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ։



Եւ իբրեւ լուան՝ ելին և փախեան 'ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. եւ ո՛չ ումեք ինչ ասացին, զի երկնչէին։

Սարկաւագունք. Ձայնաւոր, Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։ Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկու"։

Եւ տեառնագրեսցեն զանդաստան։

Սարկաւագն. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ"։
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս"։

Դպիրն. Ժամամուտ։

Քանզի յարեաւ 'ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ և յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք Հրեշտակաց և ամենայն զուարթունք երկնից։ Ընդ որս գոչելով ասեմք, փառք սոսկալի յարութեան քո Տէր։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ"։

Եւ անտի յառաջ խաղացեալ երթան 'ի սուրբ Պատանատեղին՝ ասելով.

Դկ. Յիսուս միածինն անմահութեանց պարգեւատուն երեւեցաւ մեզ, խափանեաց զզօրութիւն մահու։

Բղխմամբ արտասուաց Մարիամու եւ

մարթայք անկեալ առ ոտսն տեառն,
խնդրէին զնորոգումն եղբօրն։
Բանիւ բանն աստուած կենագործեաց
ըզղազարոս 'ի թաղմանէ, եւ եկեալ
արտաքս անապական։

Աստուածածին պայծառ քան զերկինս,
որ 'ի մեզ ծագեցեր ըզլոյսն մեծ եւ գե-
րազանց, որով խաւարն անգիտութեան
հալածեցաւ. սրովբէական ձայնիւ զքեզ
բարեբանեմք, եւ հոգեւոր երգով մեծա-
ցուցանեմք։
Ամպ թեթեւ եւ լուսաւոր, որ զանձ-
րեւն կենաց 'ի քեզ հեղեալ 'ի յերկնային
ծովէն, զոր հոսեցեր 'ի յերկիր ծարաւուտ.
սրովբէական ձայնիւ զքեզ բարե։
Պարտէզ փակեալ աստուածատունկ ե-
դեմ, որ եւ ծառն կենաց 'ի մէջ դրախ-
տի քո 'ի հոգւոյն տնկեալ, անմահական
պտղովն ելից ըզտիեզերս. սրովբէական
ձայնիւ ըզքեզ բարե։

Այսօր նշան յաղթող երեւեալ 'ի յեր-
կրի պայծառացոյց ըզտիեզերս. զէն յաղ-
թութեան ետուր ըզխաչ քո տէր, ապրե-



ցուցանել ըզմեզ 'ի պատրանաց թշնամ-
ւոյն։
Փայտ կենաց կանգնեալ 'ի մէջ տիեզերաց,
յոյս եւ ապաւէն ազգի մարդկան. սա
պահեսցէ ըզմեզ յամենայն վտանգից մե-
րոց. ապրեցուցանել ըզ։
Փառք Հօր և Որդւոյ և.
Յաղթող զօրութեամբ խաչի քո պահեա
ըզմեզ քրիստոս աստուած. որ տարածեցեր
ըզձեռս քո 'ի նմա. եւ լուծեր ըզկնիք
դատապարտութեան յանցանաց մերոց.
ապրեցուցանել ըզ։
Այժմ և միշտ և յաւիտեանս.
Ի հարկանել փողոյ հրեշտակապետին մե-
ծի, 'ի բանալ գերեզմանացն զարթիցեն
մեռեալքն. անապական մարմնով զարդա-
րին ընդ առաջ քո տէր. զապաւինեալսն 'ի
քեզ զհոգիս ննջեցելոց մեր ընկալ յանտը-
տում 'ի կեանսդ. որ օրհնիս երգով 'ի հրե-
ղէն զուարթնոցն։

Իբրեւ շարադասին յաջմէ եւ յահեկէ Պատանատեղւոյն երգեն 'ի ձայն. Ալէլուիա ալէ". Բարձր առնեմ զքեզ Տէր, զի ընկալար զիս, եւ ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս։ Տէր աստուած իմ, կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս".

Սարկաւագն. Ալէլուիա Որթի:
Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն:
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութբ լուա″.
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու:
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ:
Ասէ Աստուած:

Վասն փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ 'ի գերեզմանն. և էր այր մի, եւ վէմ մի եդեալ 'ի վերայ նորա:
Եւ ասէ Յիսուս. 'ի բաց արարէք զվէմդ. Ասէ ցնա Մարթա քոյր մեռելոյն. Տէ՛ր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է:
Ասէ ցնա Յիսուս. Ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես՝ տեսցես զփառս Աստուծոյ:
Եւ իբրեւ 'ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր 'ի վեր, և ասէ. Հա՛յր, գոհանամ զքէն զի լուար ինձ. եւ ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ, այլ վասն ժողովրդեանս որ շուրջ կան առնեմ՝ զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս:
Զայս իբրեւ ասաց, 'ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Ղա՛զարէ, արի եկ արտաքս:
Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք, և ձե-



ռօքն երիզապնդօք, և երեսօքն վարշամակապատօք. և ասէ ցնոսա Յիսուս. Լուծէք զդա և թողէք երթալ:
Բազումք 'ի Հրէիցն որք եկեալ էին առ Մարեմանս, իբրեւ տեսին զոր արարն՝ հաւատացին 'ի նա:
Եւ ոմանք 'ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն, և պատմեցին նոցա զոր արարն Յիսուս:

Թափօրապետն. Հոգւոյն հանգուցելոց Քրիստոս Աստուած″.
Սարկաւագն. Եւ եւս խաղաղու″. Վասն հանգուցեալ հո″.
Աւետարան ընթերցողն. Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ″.
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն″.
Թափօրապետն. Տեառնագրեալ ասէ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ″. Եւ արկանէ խունկ 'ի բուրվառն:

Եւ երթան անտի դասակարգիւ 'ի դուռն աստուածընկալ Գերեզմանին Քրիստոսի:

ԲԿ. Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց:
Ընդ արշալուսն առաւօտուն կանխեալ կանանցն 'ի գերեզմանն ասելով, Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց:
Եւ առ նոսա ասէր հրեշտակն, զի խնդրէք ընկենդանին ընդ մեռեալս, Քրիս:
Փութացարուք ով սուրբ կանայք եւ պատմեցէք աշակերտացն ասելով, Քրիս:

Առաւօտեան սուրբ կանայքն հանգերձ բուրմամբ եւ խնկովք եկին 'ի սուրբ գերեզմանն. եւ ողալով խնդրէին զանմահ փառաց Թագաւորն:

Եւ 'ի ձայնէ հրեշտակին զուարճացան տրտմազգեացք առաւօտեան սուրբ կանայք. զի՞ խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. յարեաւ փառաց Թագաւորն:

Աստուածասէր սուրբ կանայք փութացարուք հետեւեալ, պատմող լինել պետրոսի եւ յովհաննու սիրելւոյն. յարեաւ փառաց Թագաւորն:

Թափօրականքն. Երգեն 'ի ձայն բարձրաձայն. Ալէլուիա ալէ՛՛.
Գովեա Երուսաղէմ, զՏէր: Եւ օրհնեա զԱստուած քո Սիօն:

Սարկաւագն. Ալէլուիա Որթի:
Աւետարան ընթերցողն. Խաղաղութիւն ամենեցուն:
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութբ լուա՛՛.

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի:

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ:
Ասէ Աստուած:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի Գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ



նոցա Յիսուս. իբրեւ տեսին զնա՝ երկիրպագին նմա, եւ ոմանք յերկուացան:
Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ:
Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:
Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ 'ի կատարած աշխարհի:

Տէր ողորմեա, քաղցրաձայն: Երգ. Գերեզմանիդ քո համ՛՛.
Սարկաւագն. Խնդրեսցուք հաւատով միաբանութբ 'ի Տեա՛՛.
Թափօրականքն. Կեցո Տէր: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո՛՛.
Աւետարան ընթերցողն. Քում ամենազօր եւ հրաշալի Յարու՛՛.
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն՛՛.
Թափօրապետն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգ՛՛.

Եւ շուրջ զԳերեզմանաւ գնան ելանել 'ի Վերնատուն.
Երգելով

Նորաստեղծեալ բանն յանէից 'ի սկզբանէ զերկինս երկնից, եւ զերկնայինն զօրս անմարմնոց իմանալեացն զուարթնոց, եւ ըզգալի տարերց քառից հակառակաց միա-

բանից. որով յաւէտ փառաբանի երրո-
դութիւնն անճառելի:

Երեքսրբեան մի տէրութիւն միով բնու-
թեամբ աստուածութիւն, լոյսն որ անեղ
արարչական ասաց լինել լոյս եղական. զոր
և ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւ-
րակէին. որով յաւէտ:

Բարունորէն բացատրեսցուք զծածկեալ
խորհուրդն ծանիցուք. զի լոյսն անտես
իմանալի մաքուր հոգւոց տե. Նոյն. Տե՛ս յէջ 9:

Հարկանի Պատարագի զոյգ կոչնակն մեր:
Անդ ՚ի սուրբ Վերնատան:

Սարկաւագն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սո".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց".

Զգեստաւորի ժամարար Եպիսկոպոսն ՚ի սենեակ Տեսչին
հաշտարար Պատարագն մատչի ՚ի վերայ կենսատու
սուրբ Գերեզմանին Քրիստոսի:

Զայլ կարգաւորութիւն պաշտաման, Տե՛ս յէջ 11:
Զկնի Պատարագին ՚ի սուրբ Յակոբ վերադառնան:

# ԿԱՆՈՆ

## ՍՐԲՈՅ ԶԱՏԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹՈՒ

### ՇԱԲԱԹ ՕՐ

Երեկոյեան ժամերգութեան կոչնակն ՚ի սուրբ Յակոբ հարկանի. Սրբազան Պատրիարքն, կամ Եպիսկոպոս ոմն Հանդիսադիր՝ ամենայն եկեղեցականօք երթայ ՚ի սուրբ Յարութիւն: Հանդէս Հրաշափառի նոյն է, որպէս ամենայն Հանդիսաւոր աւուրց: Նախ քան զժամերգութիւն, Սարկաւագունք զոյգ բուրվառաւ երթեալ խնկարկեն յամենայն տնօրինական Սրբազան տեղիս. յամենայն Հանդիսի աւուր յերեկոյ և ՚ի գիշերի: Իսկ ամսական սարկաւագ սրբոյ Յարութեան՝ յամենայն երեկոյ և առաւօտ նախ քան զժամերգութիւն խնկարկէ անխափան:

### ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՆԱՆՑ ԿԻՐԱԿԷ

Ի ժամու գիշերային ժամերգութեան հարկանի կոչնակ ՚ի սուրբ Յակոբ. երթան ամենայն պաշտօնեայքն ՚ի սուրբ Յարութիւն՝ սրտեռանդն սիրով. ՚ի սուրբ Վերնատան պաշտի ժամերգութիւն: Զկնի՝ հարկանի զոյգ կոչնակն: Առաջի Քրիստոսի աշխարհակեցոյց Գերեզմանի դրան՝ ասի Ճաշու ժամն. ժամարար Եպիսկոպոսն ՚ի սենեկի Տեսչին զգեստաւորի: Զայլ խորհրդաւոր արարողութիւնս.

Տե՛ս յէջ 11:

Ապա դառնան ՚ի սուրբ Յակոբ:

# ՑԱՆԿ


ԵՐԵՍ

Վ ԱՐԱԳԱՑ ՍՈՒՐԲ ԽԱՉ․ շաբաթ երեկոյ . . . . . . . . . 5։
Կիւրակէ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 11։
ԳՒՒՏ ԽԱՉ․ շաբաթ երեկոյ . . . . . . . . . . . . . . . 13։
Կիւրակէ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 14։
Ուխտօրէից, Թլփատութեան առաւօտ . . . . . . . . . . 31։
Մեծի պահոց Ա․ շաբաթու շաբաթ երեկոյ . . . . . . 35։
Կիւրակէ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 36։
Մեծի պահոց չորրորդ շաբաթու շաբաթ երեկոյ . . . 45։
Դատաւորի Կիւրակէ . . . . . . . . . . . . . . . . . 45։
Ծաղկազարդի Շաբաթ և Կիւրակէ . . . . . . . . . . 57։
Զատկի Ճրագալուցի Շաբաթ օր . . . . . . . . . . . 77։
Սրբոյ Զատկի Կիւրակէ . . . . . . . . . . . . . . . 83։
Աշխարհամատրանի Շաբաթ և Կիւրակէ . . . . . . 105։



Гос. Библиотека
ՀՍՍՀ–Арм ССР

3000

ՀՀ Ազգային գրադարան
NL0029843

2913